


# ԴՐՈՇԱԿ



„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

## Ա Պ Ս Տ Ա Մ Բ Ո Ւ Թ Ի Ի Ն Կ. Պ Ո Լ Ս Ո Ւ Մ Ա Ր Ի Ի Ն Ա Հ Ե Ղ Կ Ռ Ի Ի Ն Ե Ր

### Ս Ե Փ Ա Կ Ա Ն Գ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

(Մ Օ Փ Ի Ա Յ Ի Վ Ր Ա Յ Ո Վ)

31/19 օգոս. 96 թ.

Ապստամբութիւն է Պոլսում: Դաշնակցականները գրաւել են Օսմանեան բանկը, կոտորելով զինւորներին և պահապաններին: Սպառնացել են օդը բարձրացնել բանկը, եթէ դեսպանները բաւարարութիւն չտան հայերի պահանջներին: Երկար բանակցութիւններից յետոյ ուսաց դեսպանատունը խոստացել է կատարել կոմիտէի պահանջած կէտերը, ինչպէս և բանկի մէջ գտնւողների ապահովութիւնը: Խուճապով զինւած դուրս է եկել բանկից և զէնքը պահպանելով մտել է անգլիական նաւը:

Քաղաքի զանազան մասերում դաշնակցական միւս խմբերը դիմադրել են զինւորների ու խուճանի յարձակման: Բազմաթիւ տաճիկներ են կոտորուել: Տաճիկները յարձակել են անպաշտպան թաղերի վրայ և սոսկալի կոտորած արել:

Դրութիւնը սոսկալի է:

1/20 սեպտեմ. 96 թ.

Զինւորները և խուճանը շարունակում են կոտորածը: Մերոնք դիմադրում են ուժեղորով:

Դաշնակցական Վերդոնական կոմիտէն սպառնացել է թափել իր ամբողջ ոյժը, եթէ անզէնների կոտորածը շարունակուի: Դեսպանները խստիւ են միջամտել և կառավարութիւնը խիստ միջոցներ է ձեռք առել: Մանրամասնութիւնները նամակով:

### ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

#### Կ. ՊՈԼՍԻ ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԷԻ

Ա. ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ Ը

Մենք անդուլ բողոքեցինք Եւրոպային թիւրք բռնապետութեան դէմ, բայց մեր բողոքները, որ օրինական էին, սխտէմաբար մերժուեցան:

Սուլթան-Համիտ արիւնհակ դրէժինդրութեամբ պատասխանեց մեզ:

Տեսաւ Եւրոպան այս ահուելի ոռճիրը և լռեց:

Ո՛չ միայն դահիճի ձեռքը չբռնեց, այլ և մեզ լըրբաբար համակերպութեան հարկադրեց:

Մեզ նախատեցին՝ մեր մարդկային իրաւունքը զլանալով մեզ, և մեր ազգային պատիւը ցմահ խոցեցին՝ մեր արեան մէջ մեր բողոքի ձայնը խեղդել ջանալով:

Մեր արիւնով սրբագործուած մեր պահանջներուն կուգայ հիմա միանալու և սրբազան վրէժի սևեռուն գաղափարը, որ սև ուրուականի պէս արձանացած է մեր աչքերուն առջև:

»Իրաւունքը զօրաւորինն է՝ ըսաւ մեզի Եւրոպան՝ իր մահառիթ անտարբերութեամբ, և մենք, տկարներս, մարդկային իրաւունքներէ զրկուածներս, հարկադրուած ենք գիտութեանը դիմելու՝ որոնելով ամեն միջոց, փրշրելու համար՝ սուլթանի գարշելի լուծը, ալ չենք կըրնար հանդուրժել:

Դիւանագիտական խաղերու ժամանակն ալ անցած է:

Մեր հարիւր-հազար նահատակներուն թափած արիւնը մեզի իրաւունք կուտայ ազատութիւն պահանջելու:

Մեր թշնամիներուն տարածած բոլոր նենգամիտ զրոյցներուն հակառակ՝ մենք խնդրած ենք և հիմա ալ կը խնդրենք միմիայն անհրաժեշտը, այսինքն՝

1. Նշանակել ծագումով և ազգութեամբ եւրոպացի բարձրագոյն կոմիսար մը՝ Հայաստանի համար, ընտրուած

վեց մեծ տէրութիւններու կողմէն:

2. Վալիները, միւլթէսարըրֆները և գաիմմէգամները պիտի նշանակէ բարձր կօմիսարը և Սուլթանը պիտի վաւերացնէ:

3. Եւրոպացի սպաներու հրամանատարութեան ներքև պիտի կազմակերպուի տեղական ազգերէն միլիցիա, ժանտարմա և ոստիկանութիւն:

4. Դատական բարենորոգումներ՝ Եւրոպական սիստէմով:

5. Կրօնի, կրթութեան և մամուլի կատարեալ ազատութիւն:

6. Երկրի հասոյթներու երեք քառորդ մասը պիտի յատկացուի տեղական պէտքերուն:

7. Յետնեալ հարկերը ջնջել:

8. Հինգ տարի հարկէ ազատել և հետեւեալ հինգ տարիներու պետութեան վճարելիք հարկը գործածել վերջին խոռոչութեանց պատճառած վնասները փոխարինելու:

9. Հայերէն գրաւուած անշարժ կայքերը անմիջապէս վերադարձնել տէրերուն:

10. Բոլոր հայ գաղթականներուն ազատ վերադարձ:

11. Ընդհանուր ներում հայ քաղաքական յանցաւորներուն:

12. Եւրոպական տէրութիւններու ներկայացուցիչներէն առժամեայ յանձնաժողով մը կազմել, որ Հայաստանի գլխաւոր քաղաքներէն մեկուն մէջ հաստատուելով պիտի հսկէ վերոյիշեալ յօդուածներու գործածութեան:

Կը կրկնենք, ոչ մէկ զոհողութեան առջև կանգ պիտի առնենք մեր նպատակին հասնելու համար:

Այսուհետև ազատ կը համարինք ինքզինքնիս ամեն պատասխանատուութենէ:

Կանխաւ կողջանք ամեն անոնց կորուստը—տեղացի թէ օտարական, որոնք զոհ պիտի ըլլան ընդհանուր շփոթութեան: Կը ցաւինք, սակայն ընդհանուր դժբաղդութեան առջև մասնաւոր սուգը իմաստ չունի:

Մենք կը մեռնինք, դիտենք. բայց յեղափոխութիւնը, որ հայ ժողովուրդի մինչև ոսկրները թափանցած է, պիտի շարունակէ սպառնալ Սուլթաններու գահին, ցորչափ մեր մարդկային իրաւունքները ձեռք չբերենք և ցորչափ կենդանի մնայ վերջին հայր:

(Տարածուած է հայերէն, ֆրանսերէն եւ թիւրքերէն):

**Ս Ա Ս Ն Ո Յ Ե Ր Կ Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ե Դ Ա Ր Ձ Ը**

**Կ. Պ Ո Լ Ս Ո Ւ Մ**

Ժայթքեց Պոլիսը:

Տխուր, յուսահատական լուութիւնը ընդհատեց նորից: Նորից շարժեց յեղափոխական ուրաւանը, այս

անգամ աւելի ահաւոր, աւելի սպառնալից... Նա զինուած է դժոխային աւերիչ մեքենաներով, նա ասպարէզ է հանել բոմբեր ու դինամիտներ, որոնք մահ ու անկարագրելի սարսափ են տարածում մահմեդական նախապաշարուած ամբոխի մէջ:

Այո, անկեղալ և տակաւին չը լուած արհաւիրքներ է տեսնում այսօր սուլթանների մայրաքաղաքը: Բոմբեր են որոտում Կ. Պոլիսի փողոցներում, բոմբեր... և դա երազ չէ, ընթերցող: «Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը» մի կատարեալ խարազան է հանել սուլթանական ըէժիմի դէմ, և այդ խարազանն է նորագոյն գիտութեան պանծալի գիւտերից մինը. այո, պանծալի է նա, այդ գիւտը, նա բարերար է, քանի որ հարւածում ու քայքայում է տաճկի նեխած կառավարութիւնը, նրա բռնաւոր, սպանիչ լուծը:

Այսօր դա մի հսկայական ողբերգութիւն է, որ խաղացում է մեր աչքերի առջև:

Մարդկային դիակներ են, որ թաւալգլոր ընկնում են Պոլիսի փողոցներում, մարդկային արիւն է, որ հոսում է շարունակ, արիւնով են ներկւել Բերան, Գալթան, Թօփանէն, Ստամբուլը... ումբերի որոտը մի րոպէ գաղար չէ աւնում:

Թնդում է Պոլիսը բառի բուն մտքով, սարսափում են ջոթըր, ժանդարմները, դիպլոմատները. բայց ամենից աւելի սոսկում է տիրանը, որ պատուպարւել է Երլըգ Քէօսքի մենաւոր պալատների մէջ, ուր արձագանք են գտնում բոմբերի ահեղ որոտումները...

Մռնչում է նա, հայերիս այդ անսիրտ, արիւնարբու դահիճը, իւր անառիկ որջից օրհասական արջի նման մռնչում է նա և անցօր բարկութեան մէջ թունալից սպառնալիքներ է ուղարկում մեզ՝ հայ յեղափոխականներիս հասցէին, հոգ չէ: Մենք վաղուց արդէն բարձրացրել ենք նրա շարտած ձեռնոցը, վաղուց ենք հրատարակել նրա դէմ «ական ընդ ականի» անողոք օրէնքը՝ սարսափին սարսափով պատասխանել բռնութեան բռնութեամբ դիմադրել: Եւ այդ սկզբունքը աւելի քան երբ և իցէ այսօր է երևան գալիս, այսօր այս հանդիսաւոր րոպէին... Տեսէք. ի՞նչ կարող է լինել աւելի յանդուգն և աւելի յաղթական, քան կտրիճ յեղափոխականների այդ փայլուն ճակատամարտը օրը ցերեկով մի պնդիսի կենտրոնում, ուր հրէշաւոր կատարելագործման է հասել լրտեսութեան սիստեմը: Ի՞նչ կարող է աւելի մեծ սարսափ ազդել տմարդ թշնամուն և անսիրտ, հրէշ դիպլոմատիային, քան թէ այն, ինչ որ արեցին երէկ դաշնակցական հերոսները ի լուր և ի զարմանս ամբողջ քաղաքակիրթ աշխարհի...

Ահա՛ նրանք, այդ անձուրաց քաջերը ոտից ցզուխ զինուած, անվեհեր ու յաղթական արշաւանքով դիմում են դէպի Օսմանեան բանկի ներսը, կոտորում են պահապաններին, կողպում, ամրացնում են դռներն ու

պատուհանները, ՏԻՐՈՒՄ ԵՆ ԲԱՆԿԻՆ... Դաշնակցութեան ձեռքին է այդ վիճակարի հիմնարկութիւնը, որ Օսմանեան կայսրութեան սիրտն է կազմում, նրա պատարը: Դաշնակցութեան բարեհաճ տրամադրութեան տակ են բանկի ահագին հարստութիւնները և հարկաւոր պաշտօնեաների ու ծառայողների կեանքը, որոնք յեղափոխականների անակնկալ արշաւանքից զարհուրած՝ շանթահարի նման, կեկեկել, արձանացել էին բանկի անկիւններում...

Ահա՛ անձնուրացների մի այլ խումբ, ահա՛ մի շարք ուրիշ խմբեր, որոնք միաժամանակ նետել էին իրենց կրակի ու սարսափի մէջ, կոտորում ու կոտորում են քաղաքի զանազան մասերում զօրքի ու Փանատիկոս խուժանի հետ ունեցած արիւնահեղ ընդհարումների մէջ: Եւ ամենուրեք ուումն է, որ ասպարէզ է գալիս իւր կործանիչ հետեւանքներով: Ատաղում է թիւրք խուժանը, անասնական, արիւնածարաւ բնազդունները սանձարձակ թուեր են առնում, գրոհ է տալիս նա նենգաբար անզէն անպաշտպան ժողովրդի վրայ, միւսնոյն ժամանակ սարսափած խորշելով յեղափոխական գեւաւուրներից, որոնք կուռում են ինչ որ սատանայական, գերբնական զէնքերով... Իսկ Մեծ Դահլիճը: Նա նոյն միջոցին խելագարած հայ տէրօրիսանների յանդուգն և անհաւատարի գործողութիւններից, շրթայակապ բանտարկեալի պէս իւր անձուկ վանդակի մէջ յուսահատական ճիչեր է արձակում և իրեն յատուկ ստորութեամբ գաղտնի հրահանգներ է ուղարկում ոստիկանութեան, խրախուսում է նրա վայրագ ընթացքը: Նա չէր կարող առանց սրտի կսկիծի տանել յեղափոխականների այդ յաղթական քայլը, և իւր ամօթալի պարտութիւնը: Այրուում, խորովում էր ամօթից ասիական բռնապետը երբ կրիտիքական ժամին նա իրեն հարկադրած տեսաւ իջնել իւր վեհապետութեան բարձրութիւնից, ընկնել յեղափոխականների ոտքերը, դիպումատների միջոցով խնդրել, աղաչել նրանց, որ թողնեն բանկը, հեռանան: Եւ կրկնապատիկ ամօթ ու խայտառակութիւն էր նոյն բռնապետի համար, երբ յեղափոխական խումբը կատարելապէս սպառազինւած՝ փառքով ու պատուով հրաժեշտ տւեց Բօսֆօրի ափերին...

Այո, դա մի ծանր ապտակ էր Օսմանեան վեհապետի համար: Ատաղեց վեհապետը, փրփուրը նստաբերանին, արիւնախում վագրի նման նետեց ինքզինքը իւր անպաշտպան զոհի՛ հայ ժողովրդի անզէն մասի վրայ. նա վռէժինդիք եղաւ...

Նենգաւոր Համիդ, այդ է քո մշտական քաղաքականութիւնը. մղի՛ր նրան առաջ, տարիների և տասնեակ տարիների ընթացքում՝ քո անզուսպ որկորը չը կշտացաւ անմեղ ժողովրդի արիւնից, մղի՛ր առաջ քո հայակործան դաւերը և քաջ իմացի՛ր, ժամը կը հընչէ, Դաշնակցական խորտակիչ ուումբը կը պայթէ Երբէք

Քէօպրիզ պատերի տակ և փլատակ կը դարձնէ կեղտի ու բռնակալութեան այդ գարշելի բուռը:

Մենք, յեղափոխական ընկերներ, մենք մեր գործը առաջ կը մղենք: Թող սուլթանական պոռնիկ կառավարութիւնը իւր արժանաւոր դաշնակիցների հետ ձեռք-ձեռքի տւած առաջ տանեն հակահայկական րեակցիան, թող մեզ անւանեն «աւազակ», «բաղդախընդիր», «ֆանատիկոս», — փոյթ չէ. մենք գիտենք մեր արածը, գիտենք մեր անելիքը:

Յառաջ գնանք, առանց յետ նայելու, զոհեր շատ տւինք, սակայն ողբալու ժամանակը չէ, յառաջ, միշտ յառաջ տէրօրիստական արհաւիրակից ճանապարհով, միշտ աւելի լայնացնենք մեր գործունէութեան շրջանը, միշտ ուժեղ և ուժեղ հարւածենք: Թող որոտան ուումբերը Պոլսի և Հայաստանի արիւնաներկ վայրերում, թող շողայ սուրբը, թող կրակը լափէ ամեն տեղ ուր տարածւում են զազիր թշնամու բռնաւոր թաթերը, թող հրդեհակի՛... այդ է մեր ազատութեան միակ գրաւականը:

Վեցցէ՛ Յեղափոխութիւնը,  
Վեցցէ՛ վիրաւոր, բայց յեղափոխական ժողովուրդը,  
Վեցցէ՛ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:

**Հ Ե Ր Ա Գ Ի Ր Ն Ե Ր**

(Ե Ի Ր Ո Պ Ա Կ Ա Ն Թ Ե Ր Թ Ե Ր Ի Ծ)

— Կ. ՊԱԼԻՍ. — 27-ին օգոս. — Երեկ կէսօրից յետոյ մի խումբ հայեր յարձակում գործեցին «Օսմանեան բանկի» վրայ, մի քանի պաշտօնեաներ և պահապաններ սպանեցին: Խառնակութիւնները շարունակեցին ամբողջ երեկոյն Ղալաթեայի, Թօփհանէի թաղերում: Ոստիկանութիւնը և զօրքը ոտքի կանգնեցին: Տիրում է մեծ սարսափ, խանութները փակւած են: Բազմաթիւ են սպանւածները և վիրաւորւածները: Մի ումբ պայթեց Բերայում, գլխաւոր պահականոցի մօտ: Զինւորներից շատերը սպանեցին կամ վիրաւորեցին:

«Դրիադ» պահականաւը թողեց Թերեպեան և ժամանեց Պոլիս: Յրանսիական և իտալական պահականաւերը սպասում են առւուօտեան:

— ՎԻԵՆԱ, 27-ին օգոս. — Կորեսպօնդանս Բիւրօի» մի հեռագրի համաձայն, հաստատում է, որ երեկայ խառնակութիւնների հեղինակը հայերն են; որոնք կամեցել են գրաւել Եւրոպայի ուշադրութիւնը:

— ՊԱԼԻՍ. 27-ին օգոս. — «Օսմանեան բանկը» հաստատում է, որ պաշտօնեաներից ոչ մէկը զոհ չի գնացել:

Ոչ մի թալան տեղի չէ ունեցել «Օսմանեան բանկում»: Խուժուկութիւնը ուղղւած չի եղել այդ հիմնար-

կուլթեան դէմ: նա ունի քաղաքական բնաւորութիւն:

Ֆրանսիական կառավարութիւնը վճռեց կանչել իր երկրորդ պահականաւր, որն այժմ կրտսա է գտնուում: Ֆրանսիայի լիազօր ներկայացուցիչը ասի իջեցրեց 12 նաւաստի «Ֆլէշ» պահականաւրից, որոնք նշանակւած են դեսպանատան պաշտպանութեան համար:

Աւստրիա-Հունգարիայի Ստամբուլում գտնուած փոստատունը փակած է: Բաղմաթիւ փողոցներում պատնէշներ են շինուած:

Իւստ յայտնի չէ խառնակութիւնների պատճառը և ծաւալը, շատ հայկական թաղերից լուրեր չկան: Մի քանիսը պնդում են, թէ բանկի վրայ յարձակում գործողները ալբանացիք են, իսկ միւսները՝ թէ քրդեր:

— ԼՕՆԻՕՆ, 28-ին օգոս. «Իէլի-Նիւզը», խօսելով Ցաճկաստանում տիրող վիճակի մասին, պնդում է, որ պետութիւնները չեն կարող մնալ անտարբերութեան մէջ: Լրագիրը աւելացնում է, որ ոչ մի անգլիական միսիստր չի դոճի մի մարդ կամ մի շէլինգ Բ. Իրան պաշտպանութեան համար:

— ԱԻԵՆՆԱ, 28-ին.— Ինչպէս հաղորդում են դիպլոմատական զեկուցումները Պոլսից, խառնակութիւնները վերագրում են հայերի ծայրայեղ կատաղութեան, որը հասել էր վերջին ծայրին Բ. Իրան շնորհիւ:

— Կ. ՊԱԼԻՍ 29-ին օգոս.— Երեկ դեսպանները լուրջ դիմումներ արին Բ. Իրան և նրա ուշադրութիւնը հրաւիրեցին այն ծանր հետեւանքների վրայ, որ կարող է ունենալ խառնակութիւնների շարունակութիւնը:

— ԼՕՆԻՕՆ, 29-ին օգոստ.— Կ. Պոլսից հեռագրում են «Իէլի-Նիւզին», որ այնտեղ երկիւղ են կրում, մի գուցէ ալեկոծութիւնը տարածւի գաւառներում: Զօրքերը ստիպում էին երեկ յետ դառնալ այն բոլոր եւրոպացիներին, որոնք Պոլիս էին ժամանում:

— ԼՕՆԻՕՆ, 29-ին օգոստ.— Պոլսի անգլիական ներկայացուցիչը հեռագրով հաղորդում է իր կառավարութեան, որ պահականաւրը Պոլիս են եկել պաշտպանելու հիւպատոսարանը, դեսպանատունը և անգլիական հպատակներին: Նա յայտնում է, որ տաճիկները յարձակւել են հայերի վրայ և անթիւ բռնութիւններ են գործեր:

— ՀՌՕՄ.— «Իէլի-Ֆրօնիկին» հաղորդում են, որ Պոլսից տեղացող մասնաւոր նամակների համաձայն թիւրքիան գտնուում է յեղափոխութեան նախընթաց օրում:

— ՊԱՐԻՉ, 29-ին Կ. Պոլսից հաղորդում են «Տան»-ին (օգոս. 28-ից), որ առաւօտեան վերականգնած հանգըստութիւնը երեկ նորից խանգարւեց: Մի արիւնահեղ կռիւ տեղի ունեցաւ այս բոլորի Բերայի Սեմ փողոցում: Զօրքը այլևս արգելք չի լինում: Զինուորները հրազէն են արձակում անգէն հայերի վրայ: Զոհերի թիւը անցում է 2000-ից: Բօսֆօրի դիւղերում բազմաթիւ ընդհարումներ եղան վերջին գիշերը:

— ՊԱԼԻՍ. 31 օգ. Ֆրանսիական, անգլիական, ռուսական և իտալական նաւերը խարիսխ են ձգել Բօսֆօրում Յլդըղից մինչև Բօփխանէ: Իտալականը կանգնած է ուղղակի Յլդըղ պալատի դիմաց:

— Գում-Գապուի օրիորդաց դպրոցի մի վարժուհու մօտ գտնուած է 65 ռումբ:

— Շատ հրացաններ են արձակուած: Գալաթիայում ռումբեր են տրաքել: 6 հայ ձերբակալուած են:

— Սեպտ. 1. Երկիւղ են կրում նոր անկարգութիւններից սուլթանի տարեդարձի առթիւ: Դեսպանները վճռել են հրաժարութիւն չանել:

— Սեպտ. 2. Նիւ-Եօրքից հեռագրում են, որ ամբողջական 5 պատերազմական նաւեր հրաման են ստացել տաճկական ջրերը մեկնելու:

\* \*

### Ք Ա Ղ Ա Ն Ն Ե Ր

(ԵՆՐՈՂԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ)

«Կ. Պոլսից եկած մի քանի հեռագրական տեղեկութիւնների համաձայն, կասկած չկայ ինձ համար, որ Օսմանեան բանկի վրայ յարձակում գործելու վրձնողներն ու իրագործողները Իրօշակեաններն են: Այդ կօմիտէի գլխաւորները ռուսահայեր են. անդամների մեծամասնութիւնը լուսաւորուած մարդիկ են և շատ լաւ կարող են իրենք իրենց հաշիւ տալ իրենց առաջացրած շարժման հետեւանքների ամբողջ ծանրութեան համար: — Այն, ինչ ես յայտնում եմ այժմ հայկական կօմիտէների կազմութեան մասին, այլևս գաղտնիք չէ: Արդէն այս բոլորը շատ յայտնի է եղել Կ. Պոլսոյ մէջ, այնպէս որ այլևս վտանգ չկայ իմ այսպէս խօսարուց:

Ի նկատի առնելով, որ այդ գործի ղեկավարները եղել են այնպիսի զարգացած մարդիկ, ինչպիսին են Իրօշակեանները, դուք կը համաձայնեք, որ Օսմանեան բանկի վրայ յարձակում գործելու նպատակը չի եղել բանկի դրամարկին ձեռք տալը:»

Խօսելով յետոյ բուն նպատակի մասին, թղթակիցը վերջացնում է հետեւեալ խօսքերով՝

«Հայաստանում մեռնողների աղաղակները շատ հեռու էին, որպէսզի կարողանային ազդել եւրոպական քրիստոնեաների վրայ: Այսուհետեւ նրանք շատ մօտ կը լինեն Եւրոպայի ականջներին լսելի լինելու համար:»

Le Petit Parisien.

\* \*

«Հակառակ տաճիկ իշխանութեան երկօրեայ ջանքերին՝ խաղաղութիւնը վերահաստատելու, մի քանի ընդհարումներ տեղի ունեցան Գալատիայի և Բերայի մէջ: «Մօրինգ Պոստ»-ի հաղորդածի համեմատ, շաբաթ

երեկոյ հայերը ուժերը են ձգել Կրեդի Լիօնէի և Բէթիի դէմ: Պալատի հիւրանոցի մօտ ևս հայերը սպանել են մէկ զինուոր:

Զանազան կառավարութիւնների հիւպատոսները և դեսպանների թարգմանները երէկանից սկսեալ մեծ ջանք են գործ դնում ոստիկանական պաշտպանութեան տակ զննել սպառնալիքների ենթարկած հայերին: Բայց չի երևում, որ դրանց միջամտութիւնը կարող է զինաթափ անել հայ յեղափոխական պարագլուխներին: Այս վերջինները ֆիլիպոպօլից եկած մի հեռագրի համաձայն՝ յայտարարել են պետութիւններին, որ կը շարունակեն իրենց գործը, մինչև որ իրենց օրինաւոր իրաւունքները և պահանջները կատարեալ իրագործում չստանան:

Բացի այդ, Բ. Դուռը ստացել է հայ յեղափոխական կոմիտէի կողմից մի ազդ, որով նա յայտարարում է, թէ յեղափոխական գործունէութիւնը կատանայ անմիջապէս նոր, աւելի կատարի կերպարանք, եթէ անմեղ մարդկանց կոտորածներին վերջ չտրւի երկու ժամւայ ընթացքում:—Արդէն յայտնի է, որ միևնոյն ազդը ուղղած է բոլոր դեսպանատներին:\*

\* \*

Ոստիկանութիւնը և զինուորական իշխանութիւնը կրկնապատիկ միջոցներ են ձեռք առել, բայց և այնպէս երկիւղ են կրում յեղափոխական նոր փորձից:

Առաւելարութիւնը խիստ հրամաններ է արձակել նահանգական իշխանութիւններին, հրամայելով ոստիկանութեան և զօրքերին՝ վերացնել բոլոր անկարգութիւնները նախ քան ժողովրդի միջամտութիւնը:

Սպանած հայերի թիւը դեռ յայտնի չէ, բայց յայտնի է, որ 450 տաճիկ սպաներ և զինուորներ սպանած են կամ ծանր վիրաւորւած: Բերայի զինուորական հրամանատարը նոյնպէս վիրաւորւած է:

Փողոցներից անցնող զինուորների վրայ շատ ուժեր են նետուել, որոնց մեծ մասը, բարեբախտաբար անհետուանք են մնացել:

\* \*

Փարիզ 29-ին օգոստոս. — Ծածկական դեսպանատուները հետեւեալ հեռագիրն է ստացել Ա. Պոլսից:

50 հայ յեղափոխականներ չորեքշաբթի օր մին միւսի յետեւից արշաւեցին Օսմանեան բանկի վրայ և սպանեցին մէկ սպայ ու պահապան ժանդարմներին, որոնց գլուխները նետեցին փողոց. ապա նրանք ապաստանեցին բանկի մէջ և սկսեցին հրացանի գնդակներ ու ուժերը թափել անցորդների վրայ:

Միևնոյն ժամանակ յեղափոխականների մի այլ խումբ պաշարեց Զալալ-խանի տունը, վիրաւորելով ու սպանելով անցորդներին, ուժերը արձակելով նրանց վրայ:

Խաս-Քէօյում յանկարծակի վրայ հասան և ջարդեցին պահականոցի զինուորներին:

Սուլու վանքի մէջ, որ գտնուում է Սամաթիայի թաղում, հայերը ապաստանեցին և սպանեցին բազմաթիւ տաճիկներ. վերջիններս պաշտպանւելով, կոտորեցին մի քանի հայեր:

Զանազան կէտերում ուժերը են գտնւած այն բոլոր բանկերի ու տների մէջ, ուր հայ յեղափոխականները ապաստան են գտել:

—Վիննա, 28-ին օգոստոսի.—Գիշերը վրայ հասած տաճիկները հետամուտ եղան հայերին: Ղալաթիայում հայերը պատսպարւելով մի տան մէջ, սկսեցին պատուհաններից արձակել զօրքի վրայ, որը իւր կողմից պատասխանեց հրացանաձգութեամբ և մի քանի հայեր սպանեց: Բազմաթիւ վաճառատուներ կողոպտւած են: Զոհւած հայերի թիւը հասնում է ոմանց ասելով մի քանի հարիւրի, իսկ ուրիշների ասելով մի քանի հազարի:

Temps.

\* \*

Ա. ՊՈԼՍԻ Ա ՊՍՏԱԲՐՈՒԹԻՒՆԸ

«Մի խումբ հայեր, 20-30 հոգի ընկուերներով ու ուժերով զինւած մօտաւորապէս ժամը մէկին ներս խուժեցին յանկարծակի բանկի մէջը, սպանեցին 5-6 հսկող պահականերին և տիրեցին բանկին: Ծառայողների մի մասը փախաւ տանիքներով, բայց մեծ մասը մնաց այնտեղ: Յեղափոխականներից 3-4 հոգի եւրոպական գտակ էին կրում, այն ինչ միւսները ծածկած էին ֆէսեր: Առաջնորդներն այնպէս գեղեցիկ էին խօսում ֆրանսերէն, որ կարծես ծագմամբ ֆրանսիացի լինէին: Ներս խուժելով՝ դրանք յայտնեցին, որ ձեռք չեն տալու ոչ ծառայողներին և ոչ բանկի դրամին, այլ որ մտադիր են ցոյց անել կառավարութեան դէմ, և եթէ կառավարութիւնը չիրագործի այն պահանջները, որ նրանք յեղափոխականները առաջադրել են դեսպաններին, այն ժամանակ նրանք օդը պիտի բարձրացնեն բանկը և իրենք ևս պիտի մեռնեն»:

N. F. Presse.

\* \*

«Ֆրանկֆուրտեր Ցայտունդից» քաղում ենք հետեւեալ տողերը.—Այս արեւահեղ կոտորածը առաջին անգամն է տեսնուում Պոլսում և այսպիսի ծանր պարագաներին Եւրոպայի լուրջ պարտականութիւնն է ամենաեռանդուն կերպով միջամտել՝ խաղաղութիւնը վերականգնելու համար: Քիչ յետոյ աւելացնում է լրագրի թղթակիցը.—«Յեղափոխականները բանկը մտնելուց յետոյ պահեցին իբրև պատանդ 100 պաշտօնեաներ: Բանկի դիրեկտոր Վելքինգ, գլխաւոր դիրեկտոր Վինսեն և սրա տեղապահ Անթօնօ փախան, ազատու-

ցին: Վինսէն վազեց իսկոյն դէպի Երլոզ Բէօսկ: Ան-  
միջապէս վրայ են հասնում օստիկանութիւնը և զօրքը,  
սկսում է կանոնաւոր պաշարում: Դէպի բանկ տա-  
նող բոլոր փողոցները փակեցին...

\*  
\*\*

«Հայերի յարձակման մասին ստացայ մի քանի ար-  
ժանահաւատ և մինչև այժմ տակաւին անյայտ տեղե-  
կութիւններ մի անձնաւորութիւնից, որը բանկի մէջ է  
եղել բոլոր ժամանակ, յեղափոխականների արշաւան-  
քից սկսած մինչև նրանց հեռանալու ընդմէջ:

Յանկարծակի ներս մտնողների թիւը մօտ 30 էր,  
որոնցից 4 հոգի պարագլուխներ էին: Սրանցից մէկը  
բռնած ունէր մի ձեռքում երկայն դաշոյն և միւս ձեռ-  
քում ունէր ուղղակի թերթիկներով արձանագրութիւններ  
էին: Սպանելով մի քանի պահապաններ, ներս մտան,  
փակեցին դռներն ու պատուհանները, երկաթէ պարա-  
զաներով ամրացրին, ապա սկսեցին անցնել բիւրօից-  
բիւրօ, խնդրեցին ծառայողներին և դիրեկտորներին, որ  
հանգիստ մնան, յայտնեցին իրենց նպատակը: Ծառա-  
յողների մի մասը դուրս գնաց մինչև զօրքի պաշար-  
ումը, դռները նորից կողպեցան. Դիրեկտոր Դիւպլի-  
փախաւ պատուհանի միջով: Զօրքը եկաւ, յեղափոխա-  
կանները սկսեցին վերևից գնդակներ թափել...

Երբ Մաքսիմովին աջօղեց համոզել յեղափոխական-  
ներին թողնել բանկը, վերջիններս առաջարկեցին ստու-  
գել կասսաները: Հաստատուեց, որ ամեն բան մնացել  
էր անշարժ, անձեռնմխելի: Միայն արծաթով լի մի  
քանի քսակներ էին պատուոտած, այն էլ ոչ գողու-  
թեան նպատակով, այլ յեղափոխականների վերքերը  
փաթածելու համար:

Ժամը գիշերուայ 2-ին Մաքսիմովի և տաճկական  
զօրքի ուղեկցութեամբ հեռացան յեղափոխականները,  
անգլիական զբօշակի տակ եկան նաւահանգիստ, ուսկից  
նաւ նստեցին Մալտայի ուղղութեամբ: Մի մասը, որ  
վերաւորած էր, ուղարկեցին տեղական ուսաց հի-  
ւանդանոցը: Առողջանալուց յետոյ նրանք ևս կուղարկ-  
ւին իրենց ընկերների ետևից:»

Berliner Tagblatt.

**Ն Ա Ս Ա Կ Բ Ա Ս Ե Ն Ի Ց**

6/18 մայիս 96 թ.

ՄՇՈՑ ՎԵՐՁԻՆ ԱՆՑՔԵՐԸ: Մշից բերել է նամակ-  
ներ մեր վտահալի ընկերներից մինը: Ճանապարհին  
եղել է միայնակ, մեծ դժուարութեամբ տեղ հասաւ:  
Նա խորին վշտօք, արտասուքը աչքերին նկարագրում

էր Մշոյ և Սասնոյ ներկայ անտանելի դրութիւնն, կա-  
ռավարութեան խստութիւնները: Միշտ կրկնում էր  
ողաւ է մեռնել, քան այսպէս ապրել: Արդէն յայտնի  
է, որ անցեալ 95 թիւ կոտորածին Մուշ և Սասուն  
համեմատաբար ազատ մնացին, բայց տարիներէ ի վեր  
արդէն Մուշ և Սասունն եղել է տաճիկ կառավարու-  
թեան խստութեանց և ճնշմանց ասպարէզ, տեղական  
ժողովուրդը անտեսապէս արդէն հասել է վերջին աս-  
տիճանի քայքայման: Ծեծ, անլուր հայհոյանք, բան-  
տարկութիւն, աւար, կապուտ-կողոպուտ արդէն սովորա-  
կան են դառնել: Հայ տարրը մինչև այսօր տնջում  
էր այս բոլորի տակ, ամենայն հնազանդութեամբ տա-  
նում էր այդ բոլորին, բայց այժմ... այժմ նա բոլոր-  
ովին փոխել է, այժմ նա հասկացել է, որ տաճիկ  
կառավարութեան ծրագիրն է հայի ոչնչացումը, ոլե-  
նել չլինելու, գոյութեան կոխ է մղում: Այն գիւ-  
ղերը, որոնք ազատ են մնացել յեղափոխական խմբե-  
րի, թիւրք կամ քիւրդ ցեղապետի մը շնորհիւ, (վեր-  
ջիններս շահու առնչութիւն ունենալով հայերի հետ,  
պաշտպանել են շատ մը գիւղեր), կառավարութեան  
աչքին փուշ էին դառնել: Նա չէ կարող տեսնել հա-  
յի մը գիւղ շէն, իւր բոլոր վայրերի խստութիւնները  
անմիջապէս թափում է այդպիսի գիւղերի վրայ և հա-  
զար ու մի տմարդի միջոցներով հարկ է հաւաքում:  
Զմուռնանք խոստովանել, որ ինքը՝ կառավարութիւնն  
աւելի վատթար վիճակի մէջ է. անտեսապէս նա բո-  
լորովին քայքայած է, ապրում է միմիայն ճակատա-  
գրի շնորհիւ: Հարեմի այդ լիբը պաւակը՝ առանց շիկ-  
նելու, ամչնալու, երբ իւր հարեմական ծախսերն պա-  
կասում են, անմիջապէս հրաման է ուղարկում՝ ժողո-  
վել հարկերը, ժողովել և միջոցների մէջ խտրութիւն  
չգնել: Ի բաց թողած չթալանած գիւղերը, այժմ բո-  
լորն էլ միևնոյն վիճակին ենթարկւած են: Երբ հար-  
կահաւաք ոստիկանները մտնեցում են հայ գիւղին,  
հայերը սարսափահար մնում են, միշտ կրկնում են  
«այս տարի ոչինչ չէ մնացել ծախելու, վտահալութիւն  
չկայ գիւղէ գիւղ գնալու, ի՞նչ անել արդեօք...» Ահա  
գարուն է. նա անապահով վիճակի մէջ չի ուզում  
աշխատել, քրտնել, որովհետև չգիտէ թէ էգուց կամ  
միւս օր ինչ կը լինի իւր վիճակը. չկայ կեանքի ա-  
պահովութիւն. դա արդէն երազ է: Ամեն օր այլ  
և այլ գաւառներից հասնող լուրերը քստմեցուցիչ  
են, միշտ թալան, միշտ սպանութիւն, խալամացում, փա-  
խուստ և այլն: Համոզւած ենք, որ եթէ դէթ ամիսներ  
շարունակի ներկայ անտանելի դրութիւնն, կոչնչանայ  
տաճկահայ ժողովուրդը. միայն դրա դարմանն ու դե-  
ղը զօրեղ շարժումներն են, ապստամբութիւնն է որ  
կորոշէ տաճկահայի ապագան, այն է՝ պատուաւոր ՄԱՀ  
կամ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ: Ժողովուրդը միանում է հայրե-  
նիքի համար կռուողների հետ. նա այլևս յուսահատա-  
կան կոխ է մղում: Այս ցանկալի օրին հասնելու հա-  
մար տաճկահայն դիմում է իւր արտասահմանի եղ-  
բարց քաղցութեանն ու օգնութեանն: Եթէ մեր ար-  
տասահմանի հայ եղբարց սրտերն ալ չեն գալար-  
ւում ներկայ սրտաձմիկ տեսարաններէն, մենք կլի ան-  
վճատ կը շարունակենք մեր յուսահատական կոխը,  
սիրով կը փարինք մահաւան ու արեան՝ որոնց հոսանք-  
ների մէջ միայն կը գտնենք մեր ազատութիւնն: Մեր  
թշնամին, այդ վայրերի արիւնարբուն հասել է իւր

վերջին աստիճանին, մենք հաւատացած ու վստահ ենք, որ նրա արհեստական գահին ալ հայ երիտասարդի դիակներին հետ կործանուում է յերկիր, դա ալ մեզ մթիթարական է, դա ալ շատ ցանկալի օր է...

\* \* \*

Ցածիկ կառավարութիւնն կարծես զգացել էր թէ Սասունն, ոգի ու շունչ է առնում. սկսել է էլի այդ դժբախտների վրայ իւր վայրենի կիրքն յագեցնել: Յատուկ մարդիկ, պաշտօնեաներ, ոստիկաններով միասին ուղարկել է Շէնք և այլ գիւղեր, առաջարկելով որ Սասունում հանտատուի գայմագամութիւն և շինել զինւորանոց: Երկրորդ՝ անգլիական փոխ-հիւպատոսի դէմ նպաստներ բաժանելու համար արգելքներ է դնում: Վերջերս էլ ով գիտէ ի՞նչ սատանայական նպատակաւ կոչնագիր է ուղարկել և երեքհարիւր մարդ Սասունից կանչել է Բաղէշի արդարադատատեան, ամբաստանելով իբրև ոճրագործներ, ոմանց իբր թէ Սասնոյ կոտորածից յառաջ և ոմանց էլ կոտորածի օմանակ. խեղճերը շարած մնացել են, եթէ չգնան, հրատարակում են իբրև ապստամբներ, ուր որ տեսնելու լինեն նրանց կառավարչական պաշտօնեաներ, իրաւունք կունենան ձերբակալելու: Մինչև ցարդ Սասունից իջնում էին դէպի Մուշ, ուր ստանալով նպաստները՝ շալկած տանում և հասցնում էին իրենց անտէր զաւակներին, ուրեմն այսուհետև այդ էլ չպիտի կարողանան կտտարել: Վերջապէս պարզ երևում է, որ այդ մարդակերի համար ծանր է Սասնոյ վերանորոգելը և նա ամեն միջոց ի գործ կը դնէ իւր նպատակին հասնելու:

\* \* \*

Սասնոյ կոտորածից յետոյ Մշոյ բանտում ձերբակալած են եղել մի քանի սասունցի իշխաններ և երիտասարդներ Մուրատի և իւր ընկերների հետ: Քուէս Ծ ամիս առաջ, երբ սրանց Բաղէշից էլի կը վերադարձնեն Մշոյ բանտը, հայդուկային խմբի անդամներից Գէորգ անուն քաջ երիտասարդն յաջողում է գողնալ երկու հատ վրանի ցից և մի չւան (շէրիդ), մտածելով որ մի օր պէտք կուգայ: Անցնում է երկար ժամանակ, մինչև գարնանս՝ դեռ ձիւնը բոլորովին չվերցած, յաջողում է բանտից փախչել հետևեալ կերպով: Ինքը Գէորգը տալլորիկցի Խաչօ անուն երիտասարդի հետ վերի յարկում բանտարկած է եղել իսկ իւր ընկեր Մշոյ Մկրագոմ գիւղացի Յովհաննէսը և տալլորիկցի Աւօ անուն երիտասարդն ներքնայարկում: Նրան մի կերպ յաջողում է վրանի ցիցերից մինը հասցնել իւր ընկերներին. վճուում են փախուստի գիշերը: Որոշեալ գիշերը Գէորգը բանտի պատը քանդելով՝ չուանով իջնում է. դեռ ընկերները չեն յաջողած գուրս գալ սկսում է մի սաստիկ անձրև, բանտապահները կորչում են, յաջողում է ընկերներին էլ գուրս բերել ու փախչել. բոլորովին մերկ ու բոբիկ, հասնում են մի քարայր ուր մնում են երկու օր, երրորդ գիշերը շարունակում են իրենց ճանապարհները և ազատուում: Կառավարութիւնը փրփրած կատարած իրողութեան վրայ, սկսում է աջ ու ձախ խուզարկել, բայց իզո՛ր...

Սրանց փոխարէն ձերբակալել են քանի մը երիտասարդներ, իբր հայդուկային խմբի անդամներ և թղթատարներ.

մանրամասնութիւններ դեռ յայտնի չեն: Գրգըղաղած գիւղում ձերբակալել են Ասուուր, Մկրտիչ և Արթին անուն երիտասարդներն, ամբաստանել են նոյն գիւղի մէջ բնակող Ճէզայիր աղա անուն թիւրքի կողմից, խուզարկութիւն է կատարել և ոչինչ չեն գտել:

Այսպէս ահա կորչում են հայ երիտասարդներն, ձեռնալայ խտուութիւնները կարծես ամեն մի հայ երիտասարդի սիրտն են կաշկանդել, շղթայել: Սկսում է բանտերը էլի լեցել. իսկ թէ բանտերում ի՞նչ դժոխային տանջանքներ են լինում՝ այդ Ասուած միայն գիտէ:

Ամեն մարդ գարնանս վրայ վատ աչքով է նայում, ամեն ոք գուշակում է թէ փոթորիկը, հայի կոտորածը յօտալուտ է: Հայ տարրը այլ ևս յոյսը կտրում է խաբեբայ դիպլոմատից և իսկապէս էլ հայ ժողովրդի համար մնացել է միայն յենւիլ իւր բարոյական ուժերի վրայ և մեռնիլ, թողնելով իբր թէ լուսաւորեալ դարու ճակատին ամօթ ու նախատինք:

Հայ ժողովուրդը, անգութ է Եւրոպան, աւելի արիւնածարաւ է քան մեր դարևոր ոսոխը. չհաւատալ նրան երբ էք, նա արեան և անմեղ զոհերի մէջ է որոնում իւր շահերն: մեր յոյսը պիտի լինի մեզ վրայ միայն: Յառաջ գնալ և մեռնել Սուրբ նպատակի համար՝ այդ է միայն մեր փառքն ու պսակը: Բոպէն կրիտիքական է, հասնել, պատերազմի դաշտում օգնել միմեանց, սփոփել իրար, մեր դիակները, թող թշնամին գիրկընդխառն տեսնէ: Իսկ դուք քոյրեր, սիրտ տուէք հայ երիտասարդին, վերակապ հիւսէք ձեր մաղբից, որ չաղտոտին իրենց անուն ու պատիւն: Ժամանակ է պարտականութիւն կատարելու, ով որ թերանայ՝ նրան թուր ու նախատինք...

**Թ Ի Ի Բ Գ Ի Ո Յ Ծ Ո Ի Բ Զ Ը**

Եւրոպայի խաւարած հորիզոն վրայ թեթեւ պարզումներ կը նշմարեն: Եթէ յանկարծ մթին ամպեր չծածկեն նորէն այդ աղօս նշյունները:

Քաղաքական սիինքսը, որ քարացած աջերով Հայաստանի համատարած աւերակներուն և արիւնոտոգ դաշտերու արին վրայ կեցած՝ ապշած ու անողորմ սրտով կը նայէր, առանց կենդանութեան շարժում մը, առանց ծիկ մը հանելու, վերջապէս կակի խլրտիւն շարժուելու: Եթէ Հայաստանի անհոյսո արեան աւերները չեն կըրցին անոր սիրտը շարժել, չեն կըցնեն անիւ կարեկցութեան ախարի մը ինչև, գոնէ Կրկտէն կարծանաւայ այդ անախկալ բաղնիք: Քաղաքականութիւնը խաչելով գուցէ իր շնական անսովորութենէն և Եւրոպայի հասարակաց կարծիքին անշու, 19-րդ դարու վերջը քաղաքակրթութեան կրած նախատիքը, եթէ ոչ բոլորովին ընջելու, գոնէ թեթեւեղութեամբ համար, բան մը ընել կուզէ--վերջ տալ թիւրքիոյ եղանակաբոճութիւններուն:

Եւրոպական տէրութիւններուն մէջ համաձայնութիւն կայացած է երբ թէ:

Երազիրներէ ոմանք, որոնք օրը քանի մը շապիկ կը փոխեն և զիտեն իրենց զրիշով այնքան շահատակութիւններ ընել, որքան իրենց առատածնակ սուլթանը, ցնծութեան աղաղակներով կողջունեն Կրկտէի հարցին լուծուած, որ սուլթանը մեծ տաղմուտ է մը կը փրկէ: Սակաւաթիւ չեն սակայն այն խոհուն թիրթիրը, որոնք հեղուորէն և թիւրախաւտորէն կը նային կարծեցեալ քարեփոխութեան վրայ:

Սողութանը իրեն հետ գետին տապալեց նաև ամբողջ քաղաքա-  
կերթ աշխարհի վարկը: Այս պիտի ըլլայ իր մեծագոյն յաղթանակը:  
Փրանսական վարժկան լրագիրները, ուսական շահերը եւ  
նոստգովութիւնները պաշտպանելու մէջ աւելի փութկոտ են, քան  
իրենց կամ թշուառ ժողովորդը պատիւը, սոյն բարեբաստիկ փոփո-  
խութիւնը կընծային Ռուսիոյ նախածեռնութեան եւ կը հրձկն, որ  
Անգլիան չի կրցար քան մ'ընեւ, մինչեւ որ իրենց դաշնակից բարե-  
կամը «մարդասիրութիւն» մուտ լըծօրէն չը մեջմտնեց:

Ի՞նչ է այդ փոփոխութիւնը:  
Կրտսէի հարցին կարգադրութիւնը, ոչ ուրիշ քան, զոնէ առայժմ  
խաբեպատիր երեւոյթը այնպէս է: Թէեւ կղզիին լարած դրութիւ-  
նը կը շարունակէ նոյնը մտաւ:

Եւրոպական միջամտութիւնը սուլութանի ուզածն է: Թիւրք կառա-  
վարութիւնը շարութեան մէջ արագ, իսկ բարեկարգութեան մէջ  
անշարժ, եւք իր դիւային ծրագիրը գործադրեց իր հպարտակաշխա-  
տասէր ժողովուրդներուն վրայ, չէր գուշակեր թէ հետեւանք երկ-  
րին տնտեսական, քաղաքական եւ բարոյական քայքայումը առաջ  
պիտի ըլլար: Սուլութանը անոնցմէ է, որոնք ամեն շարիք կը գործեն  
եւ իրենք գիտնէք կը յանձնեն ծակատագրին:

Այսօր իսկապէս Թիւրքիան մոխիրի վրայ նստած կառավարու-  
թիւն մէ, բարոյապէս եւ նիւթապէս գոյութիւն չունի. անիկա  
ունեցածը չունեցած վատնեց, իր ոճիրները պարտկելու համար եւ  
ժողովուրդին արեւնը քամեց, իր պաշտպանութիւնը, ընկրդերը եւ լը-  
տեսները կերակրելու համար: Ասիական մասը չի բաւականացնէր  
զինքն: Մաղինդանիան աւելած է, միւս կողմէն երկրին բարոյական  
ոյժը ներկայացնող տարրերը կամաց-կամաց կը հետանն, իրենց  
նորի փոշին թօթելով այդ անիծեալ աշխարհին վրայ: Երկիրը գո-  
ղերուն եւ աւագակներուն ծնողը մտացած է, որոնք զայնպէս աւա-  
զակապիտին հօգը հովանաւորութիւնը կը վայելն:

Բայց մի՞ թէ մոլեռանդութիւնով, պաշտպանութիւնով երկիր  
կը կառավարի, մի՞ թէ քննակալի մը կամայականութիւնը հերքէ է  
ժողովուրդներուն բանձանքը, յառաջդիմական հոսանքը կասեցնելու:  
Թիւրքիան ցոյց տուաւ թէ կառավարութեան մը բարոյական ա-  
մենասարքական սկզբունքներէն գուրկ է, եւ թէ քաղաքակրթու-  
թեան արտաքին ձեւականութեան տակ անօրինակ հրէշ մէ: Զու՛նի  
հետաետութիւն, խոհեմութիւն եւ դեռ կորօրի այն խելքով թէ մար-  
դիկ իրաւունք չունին խալիֆային արարքները քննադատելու, թէ  
հպատակները պէտք չէ ցանկութիւններ, ձգտումներ ունենան եւ թէ  
սուլութանը անոնց վրայ կեանքի եւ մահու իշխանութիւն ունի:

Բայց զուրանական մոլեռանդութիւնը, զազանական կիբքի  
յազնցումը չի բաւեր, պէտք է կրործք տալ անողոր իրականութեան,  
որ իր ծանկներուն մէջ Թիւրքիան կը քամէ այս ըռակէս իր կենսա-  
կան ոյժէն: Հատած վնցած է Օ ս մ ա ն ն ա ն մ ն ծ ա գ օ ր կ ա յ ւ -  
ր ու թ ի ն ը (ալ Օսման տէօկէթին). քան մը կը մայ սուլութանին,  
միակ ամբողջ մը, որուն ետեւէն կարող ըլլայ ժամանակ մ'ալ պահ-  
պանել իր դատապարտած գոյութիւնը: Իր հարեմանոցներն են ...  
Վրասիոյ դեռ մայքներ ունի:

Երկրին ելեւմտական անկումին, ժողովուրդին մէջ տիրող խուլ  
նժգոհութեան առջեւ, որ երթալով փոթորիկ կը փոխի, համախա-  
մութեան ցնորքով սողորւած չամիւռ, իր յիմարութեանը մէջ պահ  
մը ուշի եկած, կը փութայ աղէտին մեծութեան առջեւ առնել, մինչ-  
չեւ որ թիշ մը ինքզինք ժողէ եւ երբ առիթը ներկայանայ վերսկսի  
իր կիսաա ձգած գործը--քրիստոնէից շնչումը:

Անա այդ գլորումին մէջէն «օգնութիւն» կաղաղակն ծըռզէն:  
Եւրոպան ծնող կերկնցնէ եւ կուզէ ոտքի հանել հոսած դիակը:

Սուլութանը զոհ է, որ Եւրոպայի այնքան խաղեր խաղալէ յետոյ,  
դեռ անկէ կը զոնէ այնքան սիրալից աշակցութիւն եւ ներդրամտու-  
թիւն, որքան չի գտան իր գոհերը:

Թիւրքիան աշրկապուկ կը խաղայ Եւրոպայի հետ: Լեզուսայրով  
եղած խոստումներով կուզէ հանդարտեցնել արի կրեւոյցները եւ  
յօժարութիւն ցոյց կուտայ անոնց ամեն մէկ պահանջները կատար-  
ել: Կը խստանայ ինքնավարութիւն տալ Մամուսի պէս, քրիստո-  
նեայ կառավարիչ կարգի եւ ընդունել տէրութեանց երաշխաւորու-  
թիւնը: Փրանսական քծնող «Թան» լրագիրը, սոյն երաշխաւորու-

թիւնը վեր կը դասէ կարգ մը ամուլ դաշնագիրներէ:--Բայց լաւա-  
զոյն չէ՞ր ըլլար, որ Եւրոպան նախ ինքզինք երաշխաւորէր:

Կրտսէն յուսակաք պիտի ըլլայ անշուշտ իր բաղձանքներուն  
մէջ, ան չէր ուզէր Թիւրքիոյ խայտառակ լուծին ներքեւ մտաւ. չէր  
հանդուրժեր, որ իր հայրենիքը, ուր ծլան մարդկութեան առաջին  
օրէնքները, անօրէն կառավարութեան մը քմահաճ վարչութեան են-  
թարկի. խրոխտ կրեւոյցին պատրաստ էր մինչեւ վերջը կուել եւ  
իտալական կամաւորները զունդագունը կը վագէին արդէն Կրտսէի  
ազատութեան համար կուելու. բայց Եւրոպան, բախտախնդիր Եւ-  
րոպան չը ներքեց, որ այդ հերոսները իրենց փափագին համեն եւ  
կուզէ մամսակի զոհացում տալ, միշտ պահելով զանոնք Թիւրքիոյ  
փտած գերիշխանութեան տակ:

Սալգարի վերջերս կաղաղակէր թէ, Եւրոպայի կուշտին վրայ  
փտախտ (gangrene) մը կայ, պէտք է անդամահատել ան-  
բողջ մարմինը, չը վարակելու համար: Թիւրքիոյ կուռէր Եւրո-  
պայ խօսքը: Բայց Սոլապի խօսքը մարդ է, կը ծրծոյ միայն: Եւրո-  
պան որոշեց, որ այդ փտախտը մայ, զի իր մէջ ալ կզգայ արդէն  
բարոյական փտախտի սուկալի վարակումը:

**ՆՆԻՐԱՏԻՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՅՈՒՅԱԿԸ**

Հայ Յեղ. Դաշնակցութեան սնդուկի մէջ ստացւած են.  
Կանաչ քաղաքից «Մարակ» խմբի ձեռամբ՝ Մինասի  
Լ Յովհաննէսի միջոցով ստացւած է 162 ռուբլի 30  
կոպէկ:

«Հայ Յեղ. Դաշնակցութեան» Ռուսձուկի կօմիտէի  
սնդուկի մէջ ստացւած են.

Փ.-ի միջոցով 135 Փր. 50 սանթ., Գ. Լ Ա.-ի մի-  
ջոցով 37 Փր., 2.-ի միջոցով 17 Փր., «Նոր-Աշխարհի»  
խմբից 27 Փր., Նիքօբօլ Ա. Ա.-ից 10 Փր.:

Բօլք. Փիլիպպէից Ոմ 40 Փրանկ:

Արշակաւան քաղ. կեդ. սնդուկի մէջ ստացւած են.  
Զանացոյ խ. 40 դճ., Փետուր խ. 20 դճ., Դաշոյն  
խ. 20 դճ., Կրակ խ. 40 դճ., Միսաք խ. 40 դճ., Ար-  
շաղոյս խ. 108 դճ., Յովհաննի խ. 120 դճ., Փետուր խ.  
40 դճ., Լախտի խ. 30 դճ., Ուժանակ խ. 20 դճ.,  
Վայ 5 դճ., Արշաղոյս խ. 100 դճ., Թուիչ 108 դճ.,  
Ենիշէրի խ. 145 դճ., Ապու-Պեշ Կ. 40 դճ., Թաթուլ  
խ. 86 դճ., Մամիկոնեան խ. 20 դճ., Քէշիշ-օղլու 1  
օխ. վառօղ Լ 100 փամիլուշտ: Ծաղիկ խ. 95 դճ.,  
Կրակ խ. 40 դճ., Արշակաւան խ. 40 դճ., Ճ. Ճ. խ.  
10 դճ., Գ. Բ. 20 դճ., Արդարասէր Ա. խ. 35 դճ.,  
Արդարասէր Բ. խ. 50 դճ., Ճանկօյի խ. 50 դճ., Ար-  
ծիւ խ. 100 դճ., Ծամակ խ. 120 դճ.:

Վ Ր Ի պ ա կ. № 13-րդի 27 Փրանկ «Նոր-Աշխար-  
հից» ստացւած է Ռուսչուկի Դաշնակցական կօմի-  
տէից:


Դաշնակցութեան անձամբներեց ինդրուս է թղթակցութեան  
Ե Նւիւրատուութեան համար դիմել.

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse)

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան



# ԴՐՈՇՆԿ



## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Օ Ս Մ Ա Ն Ե Ա Ն Ի Ա Ն Կ Ի Գ Բ Ա Ի Ո Ի Մ Ը

### ԲԱՆԿԸ ԳՐԱԻՈՂՆԵՐԻ ՊԱՅԱՆՑՆԵՐԸ (Ներկայացրած Ֆրանսերէն լեզուով)

Մեր պահանջներն են.

1. Ապահովել միջազգային միջամտութեամբ ամբողջ երկրի խաղաղութիւնը:

2. Ընդունել բոլոր պահանջները, որ դրել է Հ. Յ. Դաշնակցութեան Պոլսոյ Աննարոնական Աօմիտէն:

3. Մեր դէմ ոյժ գործ չգնել:

4. Անանքի կատարեալ ապահովութիւն թէ՛ բանկի մէջ գտնուողների և թէ՛ քաղաքի այլ մասերում խառնակութեանց մէջ մասնակցողների:

Բանկի շարժական կայքը, դրամը կը մնան անփաստ մինչև մեր պահանջների գործադրութիւնը: Հակառակ դէպքում բոլոր թղթերը, դրամը կը ոչնչացնենք և մենք էլ ծառայողների հետ միասին բանկի փլատակների տակ կը գտնենք մեր մահը:

Մենք ստիպւած ենք դիմել այս ծայրայեղ միջոցներին:

Դա մարդկութեան դատապարտելի անտարբերութիւնն է, որ մեզ հասցրել է այս աստիճանին:

### Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ Կ. ՊՈԼՍԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՕՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

### Ս Ե Փ Ա Կ Ա Ն Գ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր (ԲՕԼԳ ԱՐԻԱՅԻՑ 10-ին)

Միաժամանակ բանկի գրաւման հետ, վճռած էինք շարդ տալ քաղաքի զանազան մասերում, իսկ միւս տեղերում պաշտպանողական դիրք բռնել:

Սամաթիա թաղում մեր կռիւլ տևեց 11 ժամ: Կստորւած են բաւական հայեր: Ցածիկների կորուստը աւելի է մօտ 1500:

Բաբային ուժակոծեցաւ, որտեղ առաջին յարձակումից 20 տաճիկ է սպանել:

Խապէտյում տաճիկների յարձակման դիմադրում

էինք ռուսներով. կոտորածը երկու կողմից էլ մեծ է: Ղալաթասարային կից տներից 3 օր շարունակ ռուսներ էինք նետում:

Ղալաթան և Բերան մինչև այսօր գոց են:

\* \* \*

(ՄԱՐՍՆԵՆ 13-ին)

Պոլսէն Մարսէլ ժամանող փախստականների պատմածին նայելով, գործը շատ մեծ կերպարանք առած է: Ցածիկների կորուստը սպասածէն շատ աւել է\*): Սամաթիայէն ու Ղալաթայէն զինուորներու և տաճիկ խուժանի դիակները անընդհատ սայլերով կը կրէին:

### ՄԵՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ ՍԱՐՍԵՅՈՒՆՍ

Ամուսյ 6-ին Մարսէլ հասաւ «Թիրոնդ» նաւը, որի մէջ էին գտնուում Օսմանեան բանկը գրաւող մեր հերոսները: Մարսէլի հայերիտասարդութիւնը պատրաստուել էր լաւ ընդունելութիւն անելու, ինչպէս և Պարիզի հայ գաղութը հայ ուսանողութեան հետ միասին, բայց ֆրանսիական ներկայ ստոր կառավարութեան մի անբացատրելի կարգադրութեան շնորհիւ տղաները ուղղակի բանտ տարուեցան, որտեղ են մինչև այսօր: 2ը նայելով անընդհատ դիմումներին, թէ բանտարկեալների և թէ Պարիզի հայ գաղութի խիստ բողոքներին ու ֆրանսիական մամուլի լաւագոյն մասի կատաղի յարձակումներին, նրանք դեռ մնում են անորոշ ժամանակով, անյայտ պատճառներով: Ահա ձեզ դիպումատիայի տւած ազնիւ խոստումների իրագործումը...

Հաւատացած են, որ ազատութիւն տալուց յետոյ, ֆրանսիական կառավարութիւնը թող չի տալ տղերանց մնալ իր հողում:

\*) Ինչպէս յայտնի է, «Նիւ-Սօրը Հերալդը» 450 է հաշուում սպանուած զինուորների թիւը, «Դէլի-Նիւսը» 400 եւ «Տան»-ի թղթակցին նայելով, զինուորական հիւանդանոցներում մօտ 500 վիրաւոր զինուոր կան:

Մանօթ. խմբ.

### ՍՈՒԼԹԱՆԻ ԳԱՅՆՎԵՑՈՒԹԻՒՆԸ

Սաստիկ յուզած է անգլիական հասարակական կարծիքը: Լրագիրները խստիւ բողոքում են. Շատերը պահանջում են ամենածայրայեղ միջոցներ, մինչև իսկ պատերազմ ծածկաստանի դէմ:

Լրագիրները յամառութեամբ պնդում են, որ անգլիական դիպլոմատիան աշխատում է անպատճառ դահլէնկեց անել Սուլթան Համիդին:

### Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ի Ի Ո Յ Ժ Ը

Այս ի՛նչ ահռելի ոյժ կայ քո մէջ, հայ ժողովուրդ: Վաղուց է, երբ դու անտրտունջ կրում էիր ստրկական ամօթաբեր շղթաները: Դու ստրուկ էիր... Դարեր քնից միայն երէկ արթնացար, իսկ այսօր ամբողջ մարդկութեան ընտիր մասը, պատկառանքով ու նախանձով է նայում քո կատարած վե՛հ գործի վրայ:

Ի՛նչ էր իրօք քո արածը. դու միայն երևան հանեցիր. քո մէջ ծածկւած հսկայական ոյժը՝ ժողովրդական մեծ կորովը...

Քանի որ դու ծուռում էիր քո խղճուկ պարանոցը, քանի որ դու լաց էիր լինում և աղերսելով էիր օգնութիւն հայցում, մարդկութիւնը խուլ էր մնում քո ողբ ու աղաղակին. քո 100,000 որդոց հեղեղներով թափած արիւնն անգամ մի քանի կարեկցող սրտերում էր միայն թոյլ դուրս շարժում. աշխարհիս զօրաւորները ու նրանց հետ ամբողջ մարդկութիւնը չէին տեսնում, չէին ուզում տեսնել արեան այդ սոսկալի ովկեանը...

Դու բարձրացիր քո արիւնաներկ հսկայական բազուկը, դու ցոյց տւիր քո ոյժը և այդ ուժի առաջ գլուխ խոնարհեցրին ամենքը՝ թէ արիւնարբու սուլթանը, թէ քեզ արհամարհող մահմետական խուժանը և թէ քեզ յիշող « դիպլոմատիան: Երեկ դու ասպարէզ էիր նետում միայն քո որդոց արիւնը վօթելով, այսօր դու քո սեփական արիւնին խաւնում ես հաղարար քո թշնամիների արիւնը: Դու սարսափ տարածեցիր ոչ թէ կոտորած զինուորների քանակութեամբ, ոչ այլ քո կուրի ձեւի մէջ առաջացած փոփոխութեամբ. դու այժմ միայն հաստատ ու դրիւ իրական ճանապարհի վրայ և այնպէս տարար քո կուրը, որ քեզ հասցրած վնասը—եւրոպացիների վնասն է ու համրների պապանձւած լեզուները արտասովոր յուզմունքով ձաւել սկսեցին: Քո կուրի այդ նոր ձեւի մէջ ազգերը յեղափոխութեան նոր դարագլուխ են տեսնում. այսօր դու այլևս այն չես, ինչ էիր երէկ և ա-

մենքի համար պարզ է, որ վաղը նոյնը չես լինելու ինչ այսօր ես:

Ինչ էլ որ լինի քո կորուստը, յամենայն դէպս նա ոչինչ է քո տարած բարոյական յաղթութեան դիմաց: Քո թշնամին նոյնն է արդեօք, ինչ էր երէկ ո՛ր է նրա արհամարհական հայացքը. ո՛ր է նրա ինքնավստահ, հպարտ քայլածքը, նրա գոռոզ անբարտաւնութիւնը:—Սամաթիացին գիտէ, թէ որքան տաճիկ է ընկած հենց միայն Սամաթիայի նեղ փողոցներում, իսկ Գուլ-Գարսուն, իսկ Բերան, Ղալաթիան, Խաս-Քէթի, Վոյօֆարան—չէ՞ որ ամբողջ Պոլսում անկիւն չէր մընացել, որտեղից մահ չսպառնար քո թշնամու գլխին, ահա ինչու՞ն է այդ փոփոխութեան միակ պատճառը: Թող տաճկական ոսկով կաշառած լրագիրների և մեր ներքին թշնամիների տարածած լուրերի համեմատ քո թշնամու կորուստը չգերազանցի 50, 100, 200 ծիծաղաշարժ թւերին—հոգ չէ. այստեղ նշանակութիւն ունի ոչ թէ թշուառ զոհերի թիւը, այլ այն իրական փոփոխութիւնը, որը առաջացել է քո և քո թըշնամիների փոխադարձ յարաբերութեանց մէջ:

Որքան էլ որ ջանան նսեմացնել քո տարած յաղթութիւնը, մի բան անհերքելի է, որ Պոլսի զանազան ծայրերը սարսեցնող Դաշնակցական հերոսների մի բուռի հետ, որոնք քաջութեամբ Օսմանեան բանկը գրաւեցին, մեծ պետութիւնների ներկայացուցիչները ստիպւեցան բանակցութիւնների մէջ մտնել, համաձայնութիւնների գալ—իսկ ուժեղը միայն զօրութեան առաջ է խոնարհում իր գոռոզ գլուխը:—Անհերքելի է և այն, որ դու այժմ մի ոյժ ես, որին չէ կարելի այլևս անտես առնել...

Ոգևորւած ներկայով ու լաւագոյն ապագայի վաւ յոյսերով դու այժմ կը կրկնապատկես քո ուժերը և կապացուցանես աշխարհին, որ 19-որդ դարի վերջում անպատիժ չի կարելի ոտնակոխ անել մարդկային իրաւունքները, և եթէ վիճակւած է գէթ մէկին լայն թող նրա հետ լայ և ամբողջ անսիրտ մարդկութիւնը...

### ՕՍՄԱՆԵԱՆ ԲԱՆԿԻ ՊԱՅԱՐՈՒՄԸ

Անգ. «Ժիրօնդ» նաւի միջէն, 16/28 օգոս. 96 թ. Վերջապէս երկար ատենէ ի վեր պատրաստւած նըպատակի դործադրութիւնը ապահովւած էր: Որոշւած օրն էր չորեքշաբթի: Այդ օրւայ կատարւելիք մեր ծրագրի մասին աւելորդ կը համարինք հոս դրել մենք կը պատմենք նրա դործադրութիւնը: Մնացած տեղեկութիւնները, կը հաղորդէ Վ. Պոլսի Վեդրոնական Վոմիտէն:

2 որերը շարժի օր ժամը 6-ին (ը. թ.) յարձակումը անպատճառ սկսելու էր. ուումբերը երեքշաբթի օրէն փոխադրած էին երկու ապահով պահեստի տղերը, ուրիշ մեր ընկերները ուումբերու և ուժանակի պարկերը շալկած մեկնելու էին պանքայի վրան:

Փափագելի օրն հասաւ:

Ժամը 5-ը եկած էր: Ընկերների մի մասը դեռ չէր հասեր. ներկայ տղերը յուզման մէջ կերևային, բոլորն ալ կանգուն, անհամբեր կսպասէին որոշած ժամուն: Ժամանակը կանցնէր և մնացած տղերը չէին հասներ, պատրաստի քիչ ուժերով բաժան-բաժան, խումբ-խումբ զանազան կէտերու վրայ յարձակելով չէինք իրականացնիլ մեր վրայ դրած յոյսը Պոլսոյ կեդրոնական կոմիտէի կողմից: Պանքայի վրայ յարձակման խնդիրը մեզի լաւ երազներու տարած էր:

Մենք լսել ընելու էինք անպատճառ այդ, որովհետև մեր նախամտածած գործի կարևորագոյն մասը կը կազմէր:

Հաւաքւեցան տղայքը:

Ամենէն ալ ընդունւեցաւ, որ 26 հոգի՝ ներկայ ուժերը բաւական էին յարձակումը սկսելու համար:

Ժամը կը մտանար, յուզումը կը շատանար, սիրտերը ամուր-ամուր կը բաբախէին. նախ զէնքերը, փամփուշաները ամենուն բաժանւեցաւ, ատրճանակները խիստ լաւ տեսակէն էին: Վարդը ուումբերու եկաւ Ջգուշու-թեամբ բամբակներու մէջ փաթած լաւ պայուսակներու մէջ զետեղւեցան:

Տղայք նախ իրենց ատրճանակներով սկսելու էին կռիւը:

Դուրս ելնելէ առաջ, տղայքը քաջալերելու համար, խրախուսական խօսքեր արտասանւեցան: Լայն կուրծքերը կուռէին, կիջնէին. դէմքերը քիչ մը տխուր, բայց մեռնելու պատրաստ լինելն կը յայտնէին:

Համբուրեցինք զիրար. տաք-տաք, անոյշ մնաք բարովի, յուզե՛ջ, տպաւորող համբոյրներ էին դրանք, որ սիրտ կուտային յուսահատողին, կամք՝ թուլացողին:

Որոշած էր, որ նախ 6 հոգի սկսելու էին նախա-յարձակը:

Ընկերներու երկուքը Աշոտ և Եգիպտացին կանխաւ երթացան լինելով ուրիշ մի պահեստի տեղ, անկէ վերագառնալու էին՝ հետեւին պարկերու մէջ լեցած ուումբեր դրած լինելով: Վարդագրութիւնն այնքան լաւ լինելու էր, որ երբ այս երկուքը պանքայի կը մտնեային, 6-ը յարձակումը ըրած լինելու էին, և ճիշտ այդ պահուն միւսներս վազելով հասնելու և միանալով ուումբակիր երկուսին, ներս խուժելու էինք: Մեր նախադրած 6 ընկերները իրենց գործը կատարած և պանքայի դրանք մեզ սպասելու էին և ներս թողնելու անոնք, որ «աղատութիւն» բառը պիտի արտասանէին:

Վերջապէս ժամանակը եկած էր:

Խորովը ճամբեց վեց նախադրած քաջերը: Մնացած տղերը կազմ ու պատրաստ կը սպասէին:

Պարկերը նետուեցան ուսերը, ատրճանակները ձեռքերնին, պահեստի տունէն դուրս ելանք:

Պանքային մտեցած ասեննիս, նախադրած ընկերներու արձակած «բամբ», «բումբ» արագ-արագ ատրճանակի ձայները լսեցինք, աւելի խրախուսած վազել սկսանք:

Մենք փողոցի մէջ շփոթը սկսած էր արդէն. աստին անդին կը վազէին, կը փախէին շարած, ահ ու դող մէջ—գլխաբաց: Հասանք պանքայի մօտ և խուժեցինք ամբողջով ներս:

Լաւ չեմ յիշեր, թէ առաջին վարկեաններուն ինչ ըրինք: Հազիւ ներս մտած՝ գաւիթի մէջին մեր տղերք սկսան հրաձիգութիւնը: Աչքերը պղտորած, գլուխները տաքացած էին. կը նետէին ուումբերը աջ ու ձիւս: Ջուր տեղն Վարոն ու ես կը պոռայինք «ոտայք մի նետէք»: Բայց էլի նոքա կատաղած կը շարունակէին իրենց կրակը անընդ-հատ, իրար ետեւէ կը նետէին ու կը նետէին: Քանիցս իրենք ալ, մենք ալ անխուսափելի սպանման վտանգի մէջ էինք: Վարը դրան առջև 3 հոգի ընկած էին մերոնցից, արդար վճճ լուծել: Կուզէին տղերքը: Ընկածներից մէկը մենակ յետոյ վերաւորւած գտանք:

Մինչդեռ մեր տղերք կրակ կը տեղային դուրսն, ներսինները պանքայի գետնայարկի պաշտօնեաները դողա-հար, գունատ, ծակերը մտած էին: Ջիրենք հանդարտեցնելու համար պոռացի, որ իրենց համար վախենալու բան չկայ, մենակ թէ տեղերնին անշարժ մնալու և մեր հրահանգներին հնազանդելու էին: Խեղճերը նախ չէին ըմբռնէր թէ ովքեր ենք մենք, մեզի գողեր կարծած էին: Այժմ քիչ հանդարտեցան, բայց երբ ուումբերու դողդիչ որոտը լսեցին, կրկին սարսափած ընկան յուսահատութեան մէջ:

Քանի մը ժամ շարունակւող սմբակոծութիւնը համոզեց իրենց, թէ մեր ըրածը ցոյց մ'էր կառավարութեան դէմ:

Վարոն թողնելով գաւիթը տասնի չափ ընկերներու հետ կուր բուն տաք ժամանակը և վտանգաւոր դրութեան մէջ, հինգ ընկերներով ես բարձրանալ սկսայ վերին յարկերը. պէտք էր շուտով տանիքը ելնել և նշան տալ դուրսը հետուն տան մը մէջ սպասող մի ընկերով, որը մեր յաղթութիւնը տեսնելուն պէս, մեր պահանջները պարունակող պաշտօնական նամակները տանելու էր վեց պետութեանց:

Առաջին յարկի վրայ խուժած էին պաշտօնեաները, մեզ մէկ տեղ, ուումբերով զինւած տեսնելուն պէս սենեակները մտնել սկսան: Հանդարտ բայց լուրջ եղանակով յայտնեցի իրենց մեր նպատակը և զանոնք սենեակները կոխելէ ետքը, նրկուող յարկը բարձրացանք: Միշտ նոյն վախը, գունաթափութիւնը, աղաղակներ և միշտ նոյն խիստ պատէրը:

Բաւական պտըտելէ ետքը, իւրաքանչիւր յարկի սանդուխքներու գաւթին վրայ մէկ ընկեր պահապան դնելէ ետքը, հետս մէկ ընկեր առնելով՝ բարձրացայ տանիքը, որ 4-րդ յարկի վրայ էր: Առաջին գործս եղաւ թաշկինակս հանել և դուրսը ցոյց տալ, քիչ մը ծածանելէ ետքը, ծխնելոյղին վրայ յաղթութեան դրօշակի տեղ կապեցի: Քանի մը վայրկեան վերջը մեր ընկերներէն Յրկօն տեսայ նշանակած բարձր տան պատշկամբի վրայ, զիս տեսնելուն պէս ուրախութեամբ դուրս վազեց. մտածեցի թէ թուղթերը կերթար տանելու դեսպանատունները, բայց քառորդ մը ետքը կրկին զինքը նոյն տեղը տեսայ, բարկացայ իրեն, որ տակաւին հոն կսպասէ, ուրախ նշաններ ընելով հեռացաւ. ժամանակը քիչ մը ուշ էր, արդէն խանութները կը գոցուէին ու փողոցները կամայանային. ոտով քիչ մը գլժուարին կը թուէր ինձ Յրկօի ստանձնած պաշտօնի յաջողութիւնը: Տանիքի եզերքէն դիտեցի փողոցը: Պաշկպօզուկի և զօրքերու բազմութիւն կար հոն.— միջնակ ուսմբ մը նետեցի և վայնասունը փրթնաւ: Փախող փախողի եղաւ: Ախրաւորեալները, սպանւածները կը վերցնէին և նոր խումբ հրացանաձիգ զօրքեր կը բերուէին: Նոր խումբ.— Արիշ ուսմբ մը և նոյն հայ հոյը, նոյն փախուստը: Ռումբերը հրաշալի արդիւնք մը կուտային: դիպածը անմիջապէս չէր սպաններ, բայց միտերը կտորկտոր կը պատուտէր, կը շարչըկէր: Մանաւանդ ահագին որոտումը, որը թնդանօթի նման աղմուկ կը հանէր և ահ կը սփռէր, թոյլ չէր տալ զօրքերուն պանքին մօտենալ:

Ես ընկեր մը մենակ հետս առած էի, միւսները վարը կը կուէին, բայց չէի գիտէր թէ ինչ դրութեան մէջ են. կիմանայի ատրճանակներու և ուսմբերու շարունակ որոտալը, բայց երբեմն կը կասկածէի, թէ մի գուցէ զօրքերը գրաւած լինին. սիրտս կը սեղմէր. հապա ընկերները. սպաննեցան արդեօք: Կարօիս վրէժ լուծելու համար կը մօտենայի՝ և փողոցի վրայ կը նետէի. կատաղաբարձութեամբ: Գիմացի և հեռուն գտնուած տուններու պատշգամբներէն, պատուհաններէն հետաքրքիր բազմութիւն մը մեզի կը դիտէր: Վարը ձայները կը շարունակուէին, կը կարծէի թէ կը մօտենային. քովս ատրճանակ չկար, ուսմբ մը մնացած էր միակ, որուն քաբսիւնները վար ընկած էին: Մեծ քանակութեամբ ուժանակ կար քովս, որը պիտի յատկացուէր պանքը օդը հանելու համար. իբր զէնք՝ Կարօի կտորած գաւազանը ձեռքս կար և մէյմալ ուժանակներն, որոնք անօգուտ էին ինձ. լուցկի չունէի վրաս, որ մտածէի այդ միջոցի վրայ: Վրաս յուսահատութիւն մը եկաւ. չէի ուզեր, որ զիս զօրքերը տանիքի վրայ ելնելով սպաննեն. ուստի տանիքի եզերքի պատին վրայ ելնելով՝ ուսմբ մը ձեռքիս մէջ ձօճելով կը պոռայի և կարծես կը ցուցնէի սպասելով, որ գնդակ մը գայ զիս սպաննէ. լաւ չեմ յիշեր, թէ ինչ

կը մտածէի այդ պահուն. բայց լաւ գիտեմ, որ անպատճառ մահը կը փնտուէի: Քանի հրացաններ վրաս ուղղեցան, բայց չը յաջողեցան: Յանկարծ թիւրք սպայի մը կոշտ ձայնը լսեցի, որ դիմացի տունէն մեզի կը սպառնար ու անամօթաբար կը հայհոյէր. մենակ լինելուն, վարը՝ փողոցը գտնուող մեծ պաշտօնեաներուն կը բղաւէր, որ իրեն զինուոր ղրկեն: Կարծես այդ միջոցին քունէ մը արթնացայ, զգացի ըրած անխոհեմութիւնս և ուզեցի աւելի սուղ կեանքս ծախել. պատուիրեցի ընկերոջս կունակը ծխնելոյղին պահուիլ և ես քաշեցայ մէկ անկիւն: Ընկերները միտքս ընկան. ահանջ դրի վարէն աղմուկ չէր լսուիր. սպաննուած են, իւրովն, մտածեցի: Խիստ յուզեցայ և լաց եղայ..

Գեռ ժամ մ'առաջ բոլորն ալ ողջ էին և լաւ յոսեր ունէինք. դեռ տա՛ք համարոյններու յուզիչ ազդեցութիւնը չէր մարած ու ընկերները այդքան շուտ կորսնցնել:

Վրէժիս դրութեամբ լի՝ ոտքի ելայ ու մօտեցայ պատուհանի մը: Մարդիկ շփոթուած՝ խումբ-խումբ եղած կամաց ձայնով կը խօսէին: Բէժիի մասն էր այդ: Պոռացի իրենց, բոլորն ալ ծակերը փախան, աւելի զայրացած կը կանչէի, որ չը վախնան և այլն և պահանջեցի, որ Բէժիի մեծը գար խօսէր հետս: Ինսպէկտօրը եկաւ պատուհանիս տակը, քայլերը դողդողուն, վախկոտ ձայնով, գլուխը կախած: Կարձ կերպով հասկցուցի մեր նպատակը. քիչ մը շունչ առաւ խեղճ մարդը ու գովեց մեր ընթացքը: Ինսպէկտօրը ղեկեցի, որ գնայ իր մարդիկը վստահացնէ. յանկարծ ամեն կողմէն երախտապարտ դէմքեր երեցան. գինիի, կօնեակի շիշերն մեզի կընծայէին. մերժեցիք և ջուր խնդրեցի: Այդ միջոցին յանկարծ իմ անունը լսեցի: Մեր տղերք էին, որ զիս կը փնտուէին. «Կարօն քեզի կուզէ», ըսին: Ինձի տրուած լուրերը լաւ էին: Վար իջայ, սանդուխքներուն վարը քանի մը մարդոց հանդիպեցայ, որոնք դիւրեկտօրի փոխանորդը ինձի ներկայացրին: Կարօն արդէն ծանօթացած էր նրան հետ: Միասին գրասենեակ մտանք: Պալատակ անառաջին քարտուղարն հոն էր. Կարօն փոխդիւրեկտօրին հետ կանխաւ խօսած էր: Պայմանները գրեցան:

- ա) Խաղաղութիւն ամբողջ երկրի մէջ:
- բ) Պետութեանց ղրկած մեր պահանջներու գործադրութիւնը երաշխաւորել.
- գ) Բոլոր այդ ճակատամարտի մասնակցողներուն ազատ թողնել և ոյժ գործ չընել.
- դ) Հակառակ պարագայի տակ՝ օդը կը հանենք պանքը մեզ հետ ի միասին:

Մինչդեռ սոյն պայմանները կը գրուէին, ես մեր տղայոց այցելեցի. համբուրեցի, քաջալերեցի, հրահանգներ տուի, իւրաքանչիւրը գատ-գատ տեղեր զետեղեցի: Կուող 17 հոգի մնացել էինք, 3 սպաննուած և 6 վերաւորուած: Ռումբները քիչցած էին, ոմանք լեցնելով

կ'ըզաղէին, ոմանք պատուհաններու մօտ լաւ դիրք գրաւած էին. այլք դրանը յարձակողներու կրակ կը պարպէին: Ամեն բան կարգին էր, յաջողութիւնն մեր կողմն էր. կը մնար խիստ աջալուրջ լինել: Տղերք ուրախ տրամադրութեան մէջ էին. իմ նոր-նոր համայրները և խրախոյսները սիրտ ու նոր հոգի տւած էին. մինչև մահ, կուելու պատրաստ լինելնին կը յայտնէին: Աւելորդ ընկերները - հետս վեր առնելով՝ զանազան կէտերու վրայ հաստատեցին: Ամենուն մօտը քանի մը ուռմբեր և լաւ ատրճանակներ կային: Վարօի մօտ գընացի. թուղթը գրւած էր: Նախ ձերմակ դրօշակ մը՝ իբրև բանակցութեան նշան, պատուհանէն դուրս հանեցին: Հրահանգ տրեցաւ մեր տղայոց՝ չնետել: Թիւրք բարձրաստիճան պաշտօնեան քանի մը տող գրեց ու վար ձգեց: Գրած էր, որ հրացանաձգութիւնը դադրի, դէնք բնաւ չ'պարպւի, թէ պանքի պաշտօնիաներէն 2 հոգի բանակցութեան համար դուրս ելնելու են, բայց ապահովութեան համար, զինուորական սպայ սպիտակ դրօշակ մը ձեռքը պանքին մօտենալու է: Այդպէս էլ եղաւ: Ձերմակ դրօշակը երեցաւ ու փոխ-դիրէկտորը և պաշտան առաջին քարտուղարը գետնայարկի պատուհանէն վար իջան:

Ժամը 5-ի ատեններն էր. հրացանաձգութիւնը դադրած էր: Սակայն 5-էն առաջ Բէթիին մէջ 2 տղերք զետեղած էի, որոնք բաւական եղան դուռը գոց պահելու, որովհետև իմ բացակայութեան ատեն դուռը բացւած ու միջի մարդիկն փախած էին, թերևս տարբեր դռնէ մը: Այնպէս, որ ժամը 4-ին, երբ Բէթին մտայ, դուռը բաց էր և դրանը մէջ զօրքեր և բազմութիւն կային. պոռացի, որ օտարականները հեռանան. 2-3 անգամ կրկնեցի ու յետոյ ուռմբ մը նետեցի. քանի մը վայրկեանէ ետքը դռները գոցւած էին ու մեր 2 տղերքը մինչև վերջը, 2 1/3 ժամ գիշերէն ետքը, հոն սպասեցին:

Ժամը 5-էն ետքը, ներկայ տղայոց անունները ըսկսայ գրել. կարգն վերաւորեաներուն ու սպանաւորներուն եկաւ: Ա՛հ, չ'պիտի մոռնամ այդ մահահացուցիչ վայրկեանը: Գուրբի դռանը մօտ իջայ սպանաւորները դիտելու և անունները նշանակելու. յանկարծ ծնկներս դողալ սկսան, կուրծքս ուռեցաւ, դիմացս կը տեսնայի Բաբկէն Սիւնին (Խոսրով-Իգլարտ) սոսկալի վիճակի մէջ, զգետները պատուաւած, այրւած, երկու ձեռքերը դաստակներէն կախւած, մտերը փրթնած, դէմքը արիւնած և մարմինը արիւնաշեճի մէջ թաղւած. սանդուխին վարի աստիճաններուն վրայ ընկած էր:

2եմ կրնար այդ վայրկենի զգացումներս ձեզի յայտնել: ահագին խորութիւն մը վրաս եկաւ, որը տեւեց երկար ժամեր: Հէ՛ք ընկերոջ անկենդան սառած մարմնոյն առջև մնացի անշարժ երկար ատեն. տխուր յիշատակներ մտքէս կանցնէին: Երեք ժամ առաջ ողջ առողջ էր և տղայոց հրահանգները կուտար դեռ կզգա-

լի երկար գրկախառնութեան անոյշ տպաւորութիւնը. մինչև դրան առջև ինձի հետ վազեց, ես քիչ մը առաջ էի ու առաջ ներս մտայ, յազատութիւն՝ կը պոռար ներս մտած ատենը ու հիմակ դիմացս կը տեսնայի նոյն սիրելի ընկերը, բայց պաղած, անչնչացած. սակայն սուկալի՝ բան էր այս. չէի կարող լալ ու յիասթափութիւն մը վրաս ընկաւ Խեղճ Խոսրով. երկուքս ալ մահը կը փնտէրէք: Սիրածի լուսանկարը Վարօի հետ գրպանէն հանեցինք, նաև ժամացոյցը և դրամը: Խոսրովի սպանումը զիս խիստ մտածումներու մէջ թաղեց: Մութը կոխած էր և ճրագները վառւած: Ուրովհետև ես պանքան մտնելուս պէս վերին յարկերը բարձրացայ. չէի գիտեր թէ վարը այդ 1 1/2 ժամայ միջոցին ինչեր պատահած էին: Ահաւասիկ մանրամասնութիւնները:

Վեց նախադրձակ քաջերը պանքի դռանը մօտեցած էին. հոն 2 հոգի զինուոր և 2 յղէյակէկ՝ պահպաններ կային. ընկերներէն մէկը ուզած էր մէկ զէյակէկը սպաննել, բայց չէր յաջողած ու ինքը մէկ գնդակով վար ընկած՝ սպաննւած էր: Քաջ տղայ մ'էր, բայց գնդակը վերջ տւաւ իր կեանքին ու փափագներուն: Ուրիշ ընկերներ նոյն ատենը սպաննեցին զինուոր մը և միւս զէյակէկը. իսկ առաջի զէյակէկը վերաւորելէ ետքը ներս վարը յարկը ապաստանած էր. բայց յետոյ նորէն մէջտեղ ելած լինելով՝ մեր ընկերներէն նոր հարւածներ ստացած էր. դիակը մէջտեղ չէր թէև, բայց ըսին մեզի, թէ սպաննւած է զինուորներին մէկը փախած էր:

Երբ նախադրձակները ատրճանակները կը պարպէին, տղերք ինձի կը հետևէին վազելով. ներս մտայ աչքս պղտորած էր, անորոշ մարմիններ տեսայ սածուղին վրայ, ատրճանակները ձեռքերնին. չեմ գիտեր թէ մերոնցմէ՞ էին, մէկ ձեռքս ուժանակի ծրարը, միւսով պատրաստ ուռմբ մը բռնած էի, ներս մտնելուն պէս սանդուխներէն վեր վազեցի: Տղերքն ալ վեր ելան ու սկսան կատաղի կերպով կրակ տեղալ, քանի մը վայրկենի մէջ հարիւրի չափ գնդակներ նետեցան:

Խոսրովը գնդակով մը զարնւած է և վար ընկած և այն ատեն ձեռքի ուռմբը պայթելով՝ այդ ահագին աղէտին պատճառ եղած է: Խոսրովի մօտը ընկած էր մի ուրիշ տղայ, որը վերաւորւած էր Խոսրովի ուռմբով: Գուրբէն նետւած մի գնդակ սպաննած էր գաւիթին մէջ մեր մի ընկերը, որը երեսի վրայ գետին իյնալով, գոտիին մէջ գտնւած ուռմբերուն պայթման պատճառ եղած էր. այս ընկերոջ մահը մեզի սուղ նստած էր. ուռմբերը թէև իր ամբողջ աղիքները դուրս հանած էին, բայց յաջողած էին 3-4 հոգի մերոնցմէ վերաւորել, որոնցմէ մէկը 12 ժամ չարաչար տանջելէ վերջը մեռաւ: Տղայք շարունակ ժամակէս կուած էին հերոսաբար: Վարօն լաւ կարգադրած էր զանոնք:

Մեր ընկերներէն Աշոտ, Եգիպտացին ուրիշ տղայոց հետ ուումբերով միասին ներս մտած էին. չկրցանք գիտնալ սպաննւեցան թէ կրցան աղատուիլ: Դռները շատ դժուարութեամբ կարելի եղաւ գոցել. առաջին փորձը անյաջող անցաւ, դիակները արգելք կը լինէին. վերջապէս Կարօն յաջողեցաւ գոցել տալ տղայոց: Դռները գոցելէն ետքը հրաձգութիւնը դեռ 1 1/2 ժամ ընդհատ կերպով շարունակեցաւ. ժամը 5-ին մեր պայմանները ներկայացնելու համար ճամբած 2 անձերնուս պանքէն դուրս ելնելէն ետքը՝ կրակը երկուստեք բոլորովին դադրած էր: Որով 4 ժամ շարունակ յարձակողական դիրք բռնելէ ետքը՝ 9 ժամ ալ պաշտպանողական դիրքի մէջ մնացինք: Մեզմէ 1-2 հոգի վնասեցան թշնամւոյն կողմանէ, այն ալ նախա-յարձակի ատենները. մինչդեռ մեր տւած վնասները ահագին էին. մեր ձրած ամեն մի ուումբ՝ կը տանէր իր հետը 5-10 հոգի. Երբեմն զոհերը շատ ու շատ էին, երբ հո՞՞ք բազմութիւն կար: Աիրաւորւածները ոռնալով, պողոտայով գետին կը փուռէին. ցաւերը սոսկալի լինելու էին: Անոնք, որ վայժտայի վրայ էին, կարող են վկայել, թէ քանի տասնեակ կառքեր իրարու ետեւ անցան: Կամաց-կամաց զօրքերը պանքի առջևէն քաշուելով, քիչ մը աւելի հեռուն կանգնեցան, բոլոր հրացանները ուղղած էին մեր շէնքի պատուհաններուն վրայ անխտէ կսպասէին յիմարները, որ ապուշի նման գլուխնիս դուրս հանէինք, որ խսկոյն հարիւրաւոր գընդակներով ջարդ ու փշուր ընէին, այդ երբեք նրանց չ'յաջողեցաւ. անգամ մը միայն՝ երբ Բէժիի դրանը առջև կուզէի 3-րդ յարկի պատուհանէն ուումբ մը ձգել, գնդակ մը եկաւ քովի պատուհանիս երկաթէ փեղկին զարկաւ ու վար ընկաւ: Աւելորդ է՝ պանքի և Բէժիի պաշտօնեաներու զբացած ահն ու սարսափը նկարագրելով՝ հոս ժամավաճառութիւն ընել. 13 ժամ պանքի մէջ մնացինք. ամենն ալ միան պէս կը դողային մեր առջևը. առանց հրամանի քայլ մը չէին կարող առնել. կարգապահութիւնը նախ խիստ էր, չէինք թողոր, որ տեղերնին շարժէին, բայց յետոյ շատ ազատ թողինք: Մեր ձեռքերու մէջ անդադար բռնած ատրճանակները ու ուումբերը նրանց մօտը հոգի չէր ձգած: Շատեր 4-5 ժամ շարունակ ձեմելներու, նեղ ծակերու մէջ պահուրած մնացին. յետոյ իրենք մեզի կը պատմէին. 30-40 հոգի, որոնք կանխաւ գետնայարկի մէջ կաշխատէին, մինչև վերջը վախերնուն դուրս չուզեցին ելնել. թէև վերենք կը վտտահացնէինք, որ բան չկայ: 20-30 պաշտօնեաներ 6-7 ժամ Բէժիի բաժինը անցնելով սկիզբէն, պղտիկ սենեկի մէջ աղտոտ տեղ մը բանտարկուած էին: Բէժիի կողմը իջած ընկերներուն ըրած այցելութեանցս միջոցին, պատահաբար իրենցմէ մի քանիսն հանդիպեցար: Շուտ աղաղակեցին, որ պանքը անցնեն, հետերին պահապան ընկերներ տալով — ազատ տեղերը զբոսցի: Պանքի մէջ բաւական ճոխ սեղան մը

կար, կերակուրներ չէին պակսեր. ըմպելիք շատ կար, հացը մինակ քիչ էր: Պաշտօնեաները կամաց-կամաց վարժեցան մեզի. բայց միշտ հրամանաւ կը քալէին, մանաւանդ վեր վար իջնել ելնելու շատ կը վախէին. սանդուխներու վրայ մեր տղերք աչալուրջ կը հսկէին. քովերնին գտնւած փայլուն քարտիւններով ուումբերը ամենէն հպարտ պաշտօնեաներու լեզուն կը կաշկանդէր ու ակնածանքի կը բերէր զանոնք: Ընդհանրապէս բոլորն ալ մեր արած քայլը գովեցին և խիստ մեծ համակրանք ցոյց տւին. անշուշտ ուումբերը դեռ շատ բաներ խօսեցնել կուտային իրենց. մանաւանդ մեր սուրբներու տարօրինակ աղմուկը իրենց արիւնը կը քամէր:

Գիշերուան ժամը 1-ին պ. Օպիուան (փոխ-դիրեկտէօր) վերադարձաւ իր հետն էին դիրեկտէօրը՝ սըր Էդուարդը, Եաւէր և ուսուսական դեսպանատան առաջին թարգման՝ Մաքսիմովը: Կարօն ու ես իջանք գետնայարկը և պատուհանէն սկսանք մեր բանակցութիւնը: Առաջարկեցին, որ ներքնայարկի պատուհանէն խօսենք, մերժեցինք. մենք ալ առաջարկեցինք, որ վեր ելնեն, անոնք ալ իրենց կարգին մերժեցին ու մենք երկուքս պատուհանէն՝ անոնք փողոցէն ժամէ մը աւելի բանակցեցանք: Բառ առ բառ գրել՝ աւելորդ կը լինէր. գլխաւոր կէտերը նշանակելով կը բաւականանամ, կէտեր, որոնք մեծ նշանակութիւն ունին:

Նախ Մաքսիմովը սկսաւ խօսել.

— Մաքսիմով. — Պալատէն կուգամ, ըսաւ, ձեր և ընկերներուդ համար ազատ երկիր երթալու հրաման ստացայ. ամեն բան պատրաստ է, աճապարեցէք և այս գիշերը մեկնէք:

— Կարօ. — Մենք չենք կրնար այդ առաջագիրը ընդունել, մեր կեանքերը նշանակութիւն չունին մեզի համար. մենք հոս մտանք մեր պահանջներու գործադրութիւնը երաշխաւորելու համար. պանքի միջէն մեր ներկայացուցած պայմանները իրականանալու են:

— Մաքսիմով. — Մինչև երեկոյ դեսպանատունն էի ձեր կեդ. կօմիտէյի կողմանէ զրկած թուղթը եկած չէր, իսկ այն պայմանները, զոր ասկէ կը ներկայացնէք, մասամբ ի նկատի առնւած են. ա) Երկրին մէջ խաղաղութիւն հաստատուելու համար միջոցներ ձեռք առնւած են, բ) Ձեր և ձեր ընկերներու վրայ յարձակումը դադարած է արդէն, գ) Ձեր ընկերներու համար երկրէն ազատ հեռացումը ապահոված է. Իսկ դ) Պայմանին գալով՝ երաշխաւորել Պօլսոյ Աեդրոնական Աօմիտէի կողմանէ ներկայացուցած պահանջներու գործադրութիւնը, այդ մեզի անկարելի է ըսել: Ես չեմ կարող հոս ձեզի հետ դիպլոմատիկական խնդիրներու վրայ բանակցել, մենք կը ջանանք համոզել սուլթանը ինչ որ

արդէն կը նենք և պիտի ընենք, որ երկրին պահանջներուն դո՛հաց ու՛մ տայ, բայց երաշխաւորել ատենց դործարութիւնը, այդ մենք չենք կարող: Դուք մեկնեցէք. մինչև հիմակ արիութիւն ցոյց տւիք, այսքան ը կը բաւէ ձեր խնդիրը նորից յուղելու, բայց եթէ յամառիք մնալ, պիտի կորսնցնէք այն դատը, զոր կը պաշտպանէք. համակրութեան տեղ՝ ատելութիւն պիտի գտնէք: Ասպառնաք, թէ հակառակ պարագայի տակ պանքը օդը պիտի հանէք. ի՞նչ պիտի վաստկէք. 157 անմեղներու մահուան պատճառ լինելով՝ ամբողջ Եւրոպայի կատաղի հակակրութիւնը, ատելութիւնը և թշնամութիւնը պիտի գրաւէք:

Քառորդ ժամ տեւեց մեր խորհուրդը: Հակառակ էինք անձնատուր լինելուն: 3 ընկեր զոհած էինք, 6 վերաւոր ունէինք—զոհողութիւննիս մեծ էր: Պէտք էր սպասել և մենք կրնայինք բաւական սպասել պաշտպանողական դիրք բռնելով: Բանակցել սկսաւ Արօն:

—Արօ.—Մենք պանքը մտանք որոշ նպատակով մը, պահանջները ներկայացած են, պիտի սպասենք մինչև վաղը իրիկուն. մինչև այդ ժամը թղթերը ստացած կը լինեն և ձեր 5 պաշտօնակիցներն (գետպաններ) ալ իրենց պատասխանը կուտան. որովհետև մենք սկզբունք ընդունած ենք մեծ պետութեանց ներկայութեամբ բանակցել:

—Մաքսիմով.—Աղաչեմք, հլէք դուրս. Եստի վրայ աւելի մանրամասն կը խօսակցենք. ոչ ես և ոչ ալ իմ պաշտօնակիցներս երբէք ձեզի հետ հոս դիպլոմատիկական խնդիրներու վրայ չենք կրնար խօսել. ժամանակը սուղ է, եթէ մնաք մինչև վաղը թերևս այս գիշեր ջարդերու պատճառ պիտի լինիք. կաղաչեմ, ծնկան կուգամ, կը խնդրեմ, որ շտապէք: Շատ դժարութեամբ սուլթանէն ձեր հրամանը ստացել եմ: Աղը կարող է փոխել այդ հրամանը, դեռ մինչև այս վայրկեան այս հրամանը ունիմ: Ձեր վրայ ահագին պատասխանատուութիւն կը ծանրանայ, նոր ջարդերու պատճառ մի լինէք. ձեր հարցով պիտի զբաղինք ձեր այդ քայլը կը բաւէ և դուրս ելէք դարձեալ կրնեմ թէ աւելորդ է ձեր պահանջած գրաւոր երաշխաւորութիւնը. կարող ենք մինչև իսկ տալ այդպիսի մի թուղթ, բայց դա երբէք խոստում մը չէ լինիր մեր կողմանէ, դանակը իսկ սրտին գրաւած ու խլած խոստում մը իրաւաբանական տեսակէտից՝ խոստում չը համարիր ու մենք ան ատեն խոստումներս չկատարելէ զատ, պիտի ասենք ձեզ. նախ որ ձեր գործածած զէնքը լաւ չէ, կրմբունեմ ձեր գրութիւնը, բայց ձեր յամառութեանը դէմ՝ դուք կը գտնէք ամբողջ Եւրոպայի ատելութիւնը, և ես ուստի պահանջ պիտի անուրախանեմ, որ եթէ յամառութեամբ ձեր դատը պիտի կորսնցնէք և ուստի պահանջաւոր քաղաքա-

կանու թիւնը ձեզի թշնամի պիտի ունենաք: Դուք լաւ սկսաք և լաւ վերջացուցէք, քիչ մ'ալ խորհրդակցէք և ամբողջ ազգի մը ձակատագիրը աչքերնուտ առջև բերէք:

Արօն ալ համաձայն չէր շուտ անձնատուր լինելու, բայց մեր պատճառով ջարդերու տեղիք տալը կը սարսափեցնէր զինքը: Ես ալ հակառակ էի դուրս ելնելու, կը վախէի, որ մեզի համար ըսեն թէ «կեանքերնին աղատելու համար շտապեցին», սակայն ջարդերու հաւանականութիւնը յամառութեամբ ուրականի մը նման դիմացս կը կանգնէր...

Մաքսիմով կապահովէր մեր դուրս գալով կոտորածի չը լինելը, այլ պարագային իր վրայ կրնկներ, իբր Եւրոպական ներկայացուցչի, հայերի դատը պաշտպանել:

—Արօ.—Խօսք տւէք, որ բացի այդ, ձեր պաշտօնակիցներով վաղը շոգենաւ պիտի գաք բանակցելու. խօսք տւէք, որ մեր 5 վերաւոր ընկերները հիւանդանոց պիտի ղեկին և յետոյ ազատին, խօսք տւէք, որ գրաւոր կերպով պիտի վկայէք, որ պանքայի ոչ մի փարան վասնած ենք:

—Մաքսիմով.—Իմ մասին ես պատույ խօսք կուտամ՝ վաղը Եստի զալ, պատույ խօսք կուտամ ջանալ իմ պաշտօնակիցները համոզել, որ գան: Պատույ խօսք կուտամ, որ ձեր վերաւորները հիւանդանոց տարւելով ու բժշկուելէն ետքը ազատ կերպով երկրէն դուրս ելնելու համար գրաւոր թուղթ տար: Գալով պանքայի իրաց յափշտակելուն, վաղը ատոր համար պաշտօնակիցներով մէկտեղ ըստուր մը կուտանք, որով ոչ որ ձեր դէմ այդ տեսակ կարծիքի մեջ չը գտնէք: Յիմակ ատրճանակները, ուսմբերը և ուսմանակները պանքը թողեցէք և եկէք շուտով մեկնենք:

—Արօ.—Ուսմբերն և ուսմանակը հոս կը թողունք, իսկ ատրճանակները՝ երբէք, մեր ընկերները երբէք չեն համաձայնիր այդ կէտի վրայ:

—Մաքսիմով.—Շատ լաւ, առէք ատրճանակները: Իսկոյն տղերքը հաւաքեցինք և յայտնեցինք մեր որոշումը. կարծես ընկերներս դժկամակութեամբ կը թողնէին այդ շէնքը, որը իրենց եղած էր 13 ժամէ ի վեր, կը կասկածէին, որ ձամբան յարձակում կրնն: Ուստի պատուիրեցինք, որ սուլթաներու ձայնը լսելուն պէս՝ նախ Մաքսիմովը և ապա 2 Եմլերները սպաննին: Արաւորները ուրախ եղան, որ հիւանդանոց փոխադրւելու են: Պանքի ամբողջ պաշտօնեաները ուրախ էին որ աժան խալսեցաւ:

Դռները բացեցան, տղերք դուրս ելան. վերջին համբոյրը տալով Խոսրովի սառած ձակատին դուրս ելանք Պանքի առաջևէն մինչև կամուրջը քարափի վրայ, փողոցին երկու երկայնքով զինւորները շարած էին, սուլթանները անցած հրացաններով զինւած: Ոչ մէկ դէպք չպատահեցաւ. քարափի մօտ 2 շոգեմակոյղներ մեզի կսպասէին: Մէկին մեջ մենք, Մաքսիմով, Եմլերները,

Սըր-Էդգարը մտանք միասին մեզ հետ 8-10 զինուորներ: Նախ մերը ճամբայ ելաւ. անվտանգ Մօտայի առջև խարսխած Սըր-Էտկարի Եսխտը փոխադրւեցանք: Մաքսիմով մեկնեցաւ խոստանալով յաջորդ օրը գալ: Գիշերը հանգիստ անցուցինք. միւս շոգեմակոյին ալ հասած էր. դրանք նշանակւած էին, իբր թէ մեզի պաշտպանել (կը վախէին, որ կը փախինք, որովհետեւ եւրոպական շոգեմակոյներ մօտէն կուգային կանցէին ու չէին թող տար մօտենալ): Երեկոյեան, ժամը 5-ի ատենները Ֆրանսական, անգլիական պահականաւորը մեր Եսխտի մօտը խարսխեցին: Ֆրանսական «Մէսսաժրին» ալ եկաւ քիչ մը հեռուն խարսխ նետեց. քիչ վերջը Ֆրանսական դեսպանատան պահականաւոր եկաւ, ուսկէ դուրս ելան Մաքսիմովը, Ֆրանսական և անգլիական դեսպանատանց առաջին թարգմանները:

Մաքսիմով շուտով մեր մօտը եկաւ, յիշեցուց, որ իր խոստումը կատարեց, իր պաշտօնակիցները հետը բերելով: Գրպանեն հանեց դեսպանատանց ղրկած մեր պահանջները ներկայացնող պաշտօնական թղթերը ըստուգեց՝ թէ ովքեր էին պանքէն ղրկելիք պայմաններու տակ ստորագրող անձերը: Չորս հոգի ստորագրած էինք.— Բաբկէն-Սիւնի, Արմէն-Կարօ, Աշոտ և Հրաչեա: Սիւնին սպանւած էր և Աշոտը մեզ հետ չկար: Սկըսւեցան բանակցութիւնները: Թուրքիկ չանելու համար կը վերապահեմ յաջորդ նամակին նկարագրութիւնը:

Մեզի «Մէսսաժրին» շոգեմակը յանձնեցին. ճամբայ ելաւ, նաւապետը մեզի յայտնեց, որ Մարտէյլէ զատ ուրիշ տեղ կար ելի չէ դուրս ելլել — այդպէս չը ա ման ունի մը ըսաւ:

Շուտով կը լինենք Մարսելում, ուսկից կը հաղորդեմ մնացածը:

**Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե ր**

(ԵՆՈՂՈՂԱՆ ԹԵՐԹԵՐՈՑ)

— «Ցանի» Պոլսոյ թղթակիցը հաղորդում է, որ հայկական յեղափոխութիւնը ցոյց տւեց իրեն աւելի կայմակերպւած և աւելի վճռողական, քան թէ սկզբից կարելի էր կարծել: Յեղափոխականներն աշխատում էին յարատեւել սարսափը օրէօր կրկնող ձեռնարկութիւններով և նրանց ամենապարզ նպատակն է եղել սպանել տալ բազմաթիւ եւրոպացիներ, որպէսզի դիպլոմատիան իր բոլոր ուժերով միջամտի:

— Հայկական կոմիտէն շարունակում է հաստատուն կերպով գործել. նա իր ձեռքի տակ ունի անհաւատալի դրամական միջոցներ: Բացի ամսեկան տասը պիստոնից, արտասահմանից ստացւում են, անկասկած, ահագին քանակութեամբ նիւթական օժանդակութիւն, որը թող է տալիս գործը շատ մեծ ծաւալով տանել:

— Հաստատուած է, որ սպանւածներից շատերի մօտ մեծ քանակութեամբ անգլիական սօվերիններ են գտնւած: Անմեղ հայերի կալանաւորելը շարունակում է: Բան-

տերում մօտաւորապէս 6000 հայեր կան.— բանտարկեալների հետ վարում են շատ վատ:

— Սեպտ. 4-ին «Դէյլի-Նիւսի» տեղեկացնում են Հոռոմից. — Իտալական ազատարական պատերազմի վետերանները և Գարիբալդիանները մի կոմիտէ են կազմել, որի նպատակն է կրետացիներին և հայերին օգնութիւն հասնել՝ զէնքով, ուղղամթերքով, ուտելիղէն պաշարով և փողով:

Վերանանի իտալացիք իրենց տէրութիւնից օգնութիւն են խնդրել:

— Ինչպէս յայտնի է դեսպանները մերժել են տօնել սուլթանի տարեդարձը: Երբ Քէֆֆիկ փաշայի բերանով սուլթանը յայտնել է թէ դա կարող է «վատ ազդի դորքերի վրայ» և խնդրել է տօնել անպատճառ, դեսպանները մերժել են և պատասխանել, թէ վերջին օրերի դէպքերից յետոյ սուգ է հարկաւոր պահել և ոչ տօնախմբութիւն կազմել: Այս պատասխանը սաստիկ ազդեցութիւն է գործել սուլթանի վրայ:

— Ֆիլիպ-Քիրրին Պոլիս է մեկնում աւելի վճռողական պատուէրներով: Այժմ այլևս կասկած չկայ, որ լորդ Սալսբիւրին վերջնականապէս վճռել է միայնակ գործել, եթէ դէպքը պահանջի: Անգլիական դեսպանը թէև կը շարունակի յարաբերութիւն ունենալ իր ընկերների հետ, ինչպէս առաջ բայց եթէ հարկաւոր լինի, նա աւելի ազատ կը լինի նաւային ուժեր պահանջելու՝ իր պահանջների վրայ պնդելու համար:

— Ռուս քաղաքականութիւնը, որին մինչև այժմ այդքան մեղադրում էին, թէ նա հայկական գործերում միշտ տաճիկ կառավարութեան կողմն է բռնում, չափազանց խիստ ընթացք է ընդունել տաճիկների կատարած խժդժութեանց դիմաց:

— «Նոյէ Ֆրայէ պրեսսէ» հաղորդում է, որ գերմանական դեսպանը առանձնապէս շատ խիստ է խօսեցել տաճկաց արտաքին գործոց նախարարի հետ և խնդրել է նրան բառ առ բառ կրկնել իր խօսքերը սուլթանին և ընդունել իբր ուղղակի միջնորդ կայսրից բղխած:

— Սեպտ. 5-ին Գեսպանները սուլթանի դէմ արտասովոր խիստ լեզու են բանացնում. առաւել որ հաւատացնում են՝ որ սուլթանի պալատում իմանում են եղել հայերի խլրաման մասին նախօրօք: Առայժմ տէրութիւնները բաւականանում են երկրորդ զօհաւորները ներս բերելով:

— Բ. Գուռը ի պատասխան 6 պետութիւնների ներկայացուցիչների հաւաքական նօտային, ուղարկեց սրանց այնպիսի բովանդակութեամբ մի ղեկուցագիր, որ դեսպանները հրաժարեցին նոյն իսկ քննութեան ենթարկելու նրան:

— Ինչպէս հաղորդում է «Դէյլի-Նիւսը», անգլիական հպատակները խնդրագրեր են ուղղել տաճիկ կառավարութեան և իրենց կորուստների համար վարձատրութիւն են պահանջել: Նոյնը խորհուրդ է տւել անել ռուսաց դեսպանատունը ռուս հպատակներին:

Դաշնակցութեան անձամթօններից խնդրում է թղթակցութեան և նւիրատուութեան համար ղեկնել:

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse)

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան



# ԴՐՈՇՆԿ

Հ.Յ.Պ. ԲԻՐՐԵՅԷ  
ԱՐԽԱՆԱՐԱՆ  
A. R. F. BUREAU  
LIBRARY

## „ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

### Պ Ե Տ Օ

(Ա Ղ Ե Ք Ս Ս Ն Դ Ր Պ Ե Տ Ր Ո Ս Ե Ա Ն)

Հեռագիրը մեզ վաղուց էր գուժել մեր անմոռաց ընկերոջ Պետօի ամբողջ խմբի նահատակման լուրը: Երկար ժամանակ մենք չէինք հաւատում,—աւելի լաւ ասած—չէինք ուզում հաւատալ սոսկալի իրողութեան. մենք դեռ յոյս ունէինք, որ խմբի մի մասը կարող էր աղաւաւած լինել: Սակայն հետզհետէ վրայ հասնող լուրերը այլեւս ոչ մի կասկած չեն թողնում. Պետօն չկայ, չկան եւ նրա ընկերները:

Պետօն մտաւ յեղափոխական ասպարէզը 1890 թ. եւ որպէս կատարեալ բնաւորութիւն, նւիրեց յեղափոխութեան ամբողջովին եւ միանգամից, թողնելով ընդմիշտ խաղաղ ուսուցչական կեանքը եւ ապրուստի կարօտ ծնողներին: Եւ մտնելով այդ ասպարէզի մէջ, նա առաջինն եղաւ մեր ընկերներից, որ ոտ դրեց Տաճկահայաստան, ոտ դրեց նէօքարի (ծառայի) դերում, ահագին քրդեայ փափախը գլխին, սրէինները ոտներին, կեխոտտ, գզգզած հագուստով... Վեց տարի շարունակ նա գործեց այնտեղ, անտրտունը կրելով զրկանքներով լի շարքաչ կեանքը, մինչեւ որ թշնամու դողակները վերջ տւին նրա կեանքին:

Ո՞վ էր Պետօն, ինչո՞վ էր նա աւելի թանկագին մեր սրբտերին:

Կան գործիչներ, որոնք անփոխարինելի են իրենց կուռելու հմտութեամբ ու անվեհերութեամբ. կան այնպիսիները, որոնք լաւ ուժեր միացնող ու կազմակերպութիւններ առաջ բերողներ են. կան կրակի մէջ առաջին նետողները եւ այլն... Սակայն կան եւ անձնուրացներ, որոնք իրենց անընկճելի ոգեւորութեամբ, անասման հաւատով ու անկեղծ սիրով դէպի Ս. Գործը յեղափոխական կազմակերպութեան հաստատուն պատանդանն են կաղմում: Այսպէս էր Պետօն. նա իր ամբողջ գործունէութեան շրջանում մարմնացեալ ոգեւորութիւն էր: Ոչինչ չէր կարող նրան թուլացնել: Կեանքի ձախորդութիւնները, կրած հալածանքները աւելի էին ամրացնում նրա ոգին, աւելի մեծ ուժով էին նրան առաջ մղում: Մեծ էր նրա բարոյական ոյժը. չարչի-յեղափոխականների չափով չէր կարելի չափել նրան:

Պետօն իր հոգեկան ուժի ամբողջ կարողութիւնը ցոյց տուց 92 թ. Բոսնիայի վառած եւ նոյն արագութեամբ հրասթափւած հայ հասարակութիւնը սառն անտարբերութեամբ էր դիտում իր շուրջը. «յեղափոխական» կոչւած շատ երիտասարդներ իրենց ծակն էին քաշել, սպասելով նոր «լաջն օրերի» նորից ասպարէզ դուրս գալու եւ «դեր խաղալու»: յեղափոխական մթնոլորդի մէջ լքուած էր առաջ գալիս. բուն երկրի մէջ գտնւած «մեռաշնորհեալ յեղափոխականները» ոչ միայն երես էին դարձնում նրանից, այլ

եւ դաւեր էին լարում նրա դէմ եւ ամենաստոր միջոցներով աշխատում դուրս քշել նրան Վանից: Սակայն այս բոլորը ոչ մի բոսնիացի կարող թուացանել Պետօի հոգին. նա կրկնակի եղանակով վերսկսեց իր գործը, հաւաքեց իր շուրջը իսկական յեղափոխականներին եւ 93 թ. վերադառնալով Կովկաս, կարողացաւ իր ոգեւորութեամբ շարժել թմբած երիտասարդութիւնը, նորից հաւատ ներշնչել դէպի Գործը եւ տանել իր հետ մատաղ ուժերի անհուն համակրութիւնը:

Պետօին, շիտակ, անկեղծ ոգեւորող Պետօին երբէ՞ք չի մոռանալ մեր երիտասարդութիւնը:

Նա հասաւ իր փափագին: Նա ընկաւ պատերազմի դաշտում, կուռելով մինչեւ վերջին շունչը: Բայց նա դեռ մեռած չէ Գործի համար, նա կենդանի է իր բաղմաթիւ ընկերների սրտերում:

Նրա կենդանի, կրակոտ պատկերը դեռ մեր աչքի առաջն է. մեր ականջին դեռ հնչում են նրա վառվռուն, ոգեւորած ձառերը, նրա խիստ ու միաժամանակ միամիտ դիմունքը քարացած սրտերին, նրա վրդովմունքը, դայրոյթը դրանց դէմ:

Դու ընկար ընկերներիդ հետ, անվատ գործիչ. ձեր մարմինները պատառ-պատառ, ձեր ոսկորները ցիրուցան են՝ «Հանգի՛տ ոսկերացող» չենք կարող ձեզ ուղղել. բայց տեսէ՛ք, ձեր ընկերները ոգեւորւած ձեր հերոսական կեանքով ու մահով, չտեսնւած կատաղութեամբ հարւածներ են թափում արիւնարբու գազանի գլխին. տեսէ՛ք, գազանը հոգեւարքի մէջ է, եւ հետու չէ այն օրը, երբ հայ ազգը ցնծութեան մէջ կը մաղթի՝ «Հանգի՛տ ձեր բաղմատանը հոգիներին, ազատութեան նահատակներ»:



Պետօ.  
Ա.Ղ.Ե.ՔԱՍՍՆԴՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

### Տ Ե Ր Ր Օ Ր Ի Ս Տ Ա Վ Ա Ն Գ Ո Ր Ծ Ո Ղ Ո Ի Թ Ի Ն Ի Ն Վ Ա Ն Ո Ւ Մ

Այսօր (յուլի 31-ին), առաւօտեան ժամ 1-ի (ը. թ.) ատեններ կատարեցաւ երկրորդ տէրրօրը վանի մէջ Հայ Յեղ. Գաշնակցութեան տէրրօրիստների ձեռամբ նշանաւոր դաւաճան և մատնիչ **ԿԱՐԱՊԵՏ ԱՃԵՍԵԱՆ**-ի վրայ, որ յայտնի էր ժողովրդի մէջ Բ ա շ օ անունով: Թողովուրդը գոհ է պիտոն, որ չստակեցաւ: Գնդակը մէկ երեսը ծակած ու միւս երեսէն դուրս ելած է: Տէրրօրիստն ազատ է: Վառաւարութիւնն սկսած է խուզարկութիւններ ընել: Այս դաւաճանին գործերը շատ շատ են, զորս կը թւենք պատեհ առթին:

### Վ Ե Ր Զ Բ Ի Ն Ո Ւ Թ Ե Ա Ն Ը

Ամեն մի ազգի պատմութեան մէջ լինում են պատմական մօմենտներ, երբ հարկ է լինում ազգային շահերը, ազգի գոյութիւնը սրի ու վառօդի միջոցով պաշտպանել. բայց այդ մօմենտները չեն կազմում ազգերի համար ինքն ըստ ինքեան նպատակ — սուրը, հուրը նրա պատակ չեն. դոքա միայն միջոցներ են և միայն միջոցներ: Աշխատանք, քրտինք, ստեղծագործութիւն — ահա կեանքի նպատակը, նա է միայն գոյութեան կուրծք մէջ ապրելու իրաւունք ստանում, ով ընդունում է այդ դաւանանքը:

Տաճիկը տարբեր է նայում. համախմբելով, նա հրով ու բրով ասպատակել սկսաւ Փոքր-Ասիան, ամենուրեք սարսափ ու մահ տարածելով ու վերջապէս Պոլսին տէր դառաւ... Բայց այդ յաղթական մօմենտը չէր կարող տեղաւոր լինել նա միայն ժամանակաւոր էր: Այդ մօմենտին պիտի յաջորդէր նոր էրա — շինող — ստեղծագործական էրա. այդտեղ տաճիկները պէտք է երևան հանէին իրենց հերքին ոյժը. բայց փոխանակ շինելու — ստեղծագործելու, նոքա յափշտակելով իրենց առաջին յաղթութիւններով — ասպատակութիւնը իբրև կառավարչական սիստեմ յայտարարեցին... Քանի երկիրը տնտեսապէս քայքայած չէր, քանի հողը ոյժ ունէր ժողովրդի դառն աշխատանքը վարձատրելու, մարդու կեղեքողի հոգեբանութիւնը թոյլ էր տալիս այդ սիստեմին գոյութիւն ունենալ, յարատեւել:

Բայց հողը թուլանում է, ժողովուրդը սնանկանում. այդ դէպքում ուժմից ես դու սնունդ առնում — ում ես կեղեքում. այդտեղ է սկսում այն կեանքի ու մահուան կռիւը, որը սկսելով խուլ կերպով, կամաց-կամաց լայն ծաւալ է ստանում — Սասուն, Զէյթուն, Ղան և նոյնանման դէպքեր առաջ գալիս ու վերջապէս Պոլսի արիւնահեղ կուռմի է պսակում... Դոքա են տաճիկն անդունդ տանողը:

Բայց գուցէ վերջն է սա, գուցէ ահագին զոհեր տալով հայ ժողովուրդը, հայ յեղափոխականը սարսափահար յետ կը նայի ու իր ինքնասպան համարած գործին վերջ կը դնի. հազար անգամ խենթ է նա, ով այդպէս կը մտածէ: Այժմ յետ կենալ... Տասնեակ հազարներով տւած զոհերից յետոյ հայը յետ չի կանգնի: Հալածւած, գաղանաբար տանջւած մարտիրոսների մեղ համար սուրբ ուրականները մեղ դէպի կուր են կանչում. մեր դժոխացած հայրենիքի զանազան անկիւններում թափած, անպատեհ մարմինները, մեր վերաւորած Մայր-Հայաստանը մեզ՝ ապրողներիս վրէժխնդրութեան է կանչում — հայ ազգի թուերը տարածած վրէժխնդիր ոգին՝ Հայաստանի սրտի մէջ կառուցող տաճարի մէջ միայն պէտք է իր հանգիստը գտնի... այդ — Աղատութեան տաճարն է...

Թող տաճիկը սպառնայ ամբողջ մարդկութեանը նորանոր կոտորածներով իր ժողովրդի ֆանատիկոսութիւնը առաջ բերելով և դրանով կարեկցութեան օգնութեան ձեռք մեկնողն արգելք դառնայ, փոյթ չի — հայ ժողովուրդն էլ իր ֆանատիկոսութիւնը առաջ կը բերի — Դարերի ընթացքում նա «ֆանատիկոսութեամբ» ստրկութեան լուծն է տարել, այժմ նա ֆանատիկոսութեամբ այդ ստրկութիւնը քանդելու, այդ ստրկութիւնից ազատելու գործն է իր վրայ առել: Երկու կուռմիներու մէջ մի տարբերութիւն կայ — մէկը՝ ֆանատիկոսաբար աշխատում է մարդու ամենասուրբ, ամենանւիրական իրաւունքները ոտքի տակ առնել, նրա մարդկային իրաւունքները խլել, միւսը — մեռնողին վայել ֆանատիկոսութեամբ մարդավայել կեանք ձեռք բերելու մասին է մտածում. մէկը իրեն նպատակ է դրել խեղդել միւսը — ազատել: Այս կուրի մէջ կարող է հաշտութիւն լինել, այս կուրից յետոյ կարող է հայը յետ կանգնել: Կանգնեցրէք պատմութիւնը. փորձեցէք կանգնեցնել ժամանակի հոսանքը: Կարող էք: Եւ ինչպէ՞ս կարող է հայը յետ կանգնել. մի՞թէ միայն վրէժխնդրութեան ոգին է, որ հային դէպի կուր է մղում. բայց այն պատմական, տնտեսական, կուլտուրական պայմանները — մինչև այդ ընդհանուր պայմանները չվերանան, չկայ հանրային հանգստութիւն, մինչև այդ ընդհանուր պայմանները չվերանան — հայը չի մտածիլ — անգամ իր եղբոր արիւնով պարարտած հողի վրայ իր դարևոր պարագմունքը սկսել. նա այժմ գերագասում է հացահատիկների փոխարէն ուումը ու գնդակներ սերմանել, որից անպայման Աղատութիւն պիտի հնձէ...

Կեցցէ՛ Աղատութիւն որոնող, ճնշւած, հալածւած, արիւնի մէջ շաղախած հայ ժողովուրդը,  
Կեցցէ՛ հայ յեղափոխութիւնը,  
Կեցցէ՛ ազատաբեր ոգին:  
Աղատութիւն և միայն ազատութիւն:

Ն Ա Մ Ա Կ Պ Ո Լ Ս Ի Ց

4/16-ին սեպտեմբեր 96 թ.

Չորեքշաբթի օրը դեսպաններու ներկայացուցիչ մեր պահանջները պարունակող պաշտօնական նամակները իրենց հասցնելու պարտականութիւնը ինձի էր յանձնուած:

Ժամը 5-ն էր, երբ հասայ իմ ընկերներու ժողովուած տեղը: Տղերք ուրախ, զւարթ կը պատրասուէին ժամ մը վերջը կատարելիք յարձակման: Զէնքերը բաժնուեցան, սակայն դեռ տղերք ամբողջացած չէին. տղայոց վրայ սկսաւ թուլութիւն մը գալ, որովհետեւ միմիայն ատրճանակներով պիտի երթային կուրի և իրենց ընկերներէն ոմանք ալ բացակայ էին, ուստի որոշեցաւ տալ տղայոց երկ-երկու ռումբ: Երբ տղերք իմացան, որ ռումբ պիտի տրուի իրենց, կարծես հերոսներու արիւնը եփ գալ սկսաւ, որովհետեւ դեռ առաջին անգամն էր, որ այն հրաշագործ երկաթը կը տեսնէին իրենց ափերուն մէջ ու ամենքը քաջալերած սկսան ռումբերու քափսիւնները դնել. մին գօտիին մէջ կը տեղաւորէր, միւսը գրպանը. իրարու ցոյց կուտային ըսելով— «է՛հ, տղերք, այս անգամ՝ փոխանակ ատրճանակներով մի քանիներ սպաննելու, պիտի սպաննենք հարիւրաւոր յիւերիմ թշնամիներ...»

Վերջապէս, մտտեցաւ վերջին ցանկալի վայրկեանը: Բարկէն-Միւնին մի քանի յուզիչ խօսքերով բացատրեց տղայոց իրենց ընելիք վե՛հ գործին նպատակը. խօսեցաւ նմանապէս Հրաչը: Այդ միջոցին Եգիպտացին գոչեց՝ «տղայք մի վճատիք, պանքը մերը պիտի ըլլայ կէս ժամ վերջը. «Ազատութիւն» կը պոռանք ու ներս կը մտնենք. սակայն պէտք է գիտնալ, որ Ազատութիւն չըսած ներս մտնել ուզողը մեզմէ չէ, պէտք է ատրճանակի մէկ հարուածով գամել իր տեղը»:

Այն ժամանակ «Ազատութիւն» բառը իրենց նշանախօս ընտրեցին: Իսկ գալով ինձի՝ Հրաչին տալիք նշանին պիտի սպասէի: Ամենքը սկսան ամուր-ամուր զիրար համբուրել. ինչե՛ր կանցնէին այդ պահուն իւրաքանչիւրի մտքէն: Հասած էր հանդիսաւոր ու վե՛հ ըրպէն. հրաժեշտ տալ հարկաւոր էր երիտասարդական կեանքի և սիրելի ընկերներու... Ի՛նչ սրտառուչ տեսարան... լաւ է լուռութեամբ անցնիլ այդ վայրկեանական տպաւորութեանց մասին, որովհետեւ դժուար է ինձի ճշմարիտ գոյներով նկարագրել այդ տեսարանը: Բարձր ու սրբազան զգացումները, սրտայուզող վայրկեաններու մէջ չեն կարող արտայայտուիլ:

Ընտրեցան երկու տղայք, որ պիտի յարձակէին վոյվոտայի պահականոցի վրայ: Բարկէն իր ատրճանակները յանձնեց անոնց ու զիրենք ճամբու դրաւ, իսկ ինք մնաց իր երկու ռումբերով:

Տղերք արդէն փողոց նետուր էին: Ես անմիջապէս իմ տեղը բարձրացայ, տենդային վիճակի մէջ անհամբեր կսպասէի. յանկարծ սկսաւ ատրճանակներու պայթումը. տղերք ներս մտան, պանքի պաշտօնեաները ահ ու դողի մէջ սկսան բեժի պատշգամը խուժել, ոմանք ալ շարած՝ բարձր պատուհաններէն դուրս ցատկել կուզէին:

Այդ միջոցին արդէն Հրաչը պատշգամը ելաւ ու սկսաւ

սպառնալիքներով վար իջեցնել ամբողջ. քիչ մը վերջ թաշկինակը հանեց ու բաւական ժամանակ երերցնելէ վերջ ծխնելոյղին կայեց. զիս տեսաւ ու սկսաւ պոռալ— «Մրկ՛, Մրկ՛, պանքը մերն է, շուտով հասցուր նամակները»: Ես ուրախութեանս խենթի նման վար թուայ ու պահապանէն գլխարկ մը ուղեցի, նա մերժեց ու չթողուց որ դուրս ելլեմ: «Փողոցները պաշարուած է» կըսէր: Ես բարկացած դարձեալ իմ տեղը բարձրացայ, տեսայ Հրաչը, որ դեռ կաշխատէր պաշտօնեաները վար իջեցնել, ամենքը իջած էին, միայն երկու հոգի կը յամառէին: Հրաչ հրամայեց տղայոց մի քանի ատրճանակ պարպել՝ վախցնելու նպատակաւ: Տղայք պարպեցին դէպի օդը, երկուքը սարսափահար սկսան վար փախչիլ տանիքը (Թէոսս) մարդ չմնաց:

Այդ պահուն արդէն խուժանն ու զինուորները պանքը պաշարած էին ու կը յառաջանային դրան վրայ: Հրաչ իր ձեռքի ռումբով մտտեցաւ տանիքի եզերքին ու ձգեց ամբոխին մէջ. գոռում-գոչումն էր որ փրութաւ, շատերը գետին փուլեցան, վիրաւորները գլուխնին, ուքերնին բռնած՝ ունալով ետ կը փախչէին: Նոյն միջոցին հազարապետ մը կը պոռար խուժանին «քէսին էրմէնիլերի» (կոտորեցէք հայերը): Հրաչ զիս դարձեալ տեսաւ միւնոյն տեղը ու սկսաւ պոռալ բարձրաձայն՝ «Մրկ՛, դեռ հոտ կը գտնուիս, հեռացի՛ր շուտ»: Ինեղձը չէր գիտէր՝ թէ ի՛նչ դրութեան մէջ էի— Այս անգամ վար իջայ. հակառակ արդէնքներու գլխարկը դրի գլուխս ու դուրս նետուեցայ:

Ահա ի՛նչ տեսարան... փողոցներու մէջ աստիճաններ անշնչացած դիակներ փուլած էին, խուժանը 25, 30, 50 հոգիէ բաղկացած խուժերու բաժնուած, խոշոր երկաթներ, հաստ փայտեր ձեռքերնին դէս ու դէն կը վազէին ու կեաւուր կը փնտռէին, իսկ ոստիկաններ ու զինուորներ փողոցները լեցած՝ բնաւ արգելք չէին լինել խուժանի ըրած խժգոնութեանց: Ես յուզած կանցնէի մէջերնուն ու ճամբաս կը շարունակէի միշտ պատրաստ երկաթի ու փայտի հարուածի մը:

Վերջապէս հասայ այն տունը, ուր կը գտնուէին իմ ընկերներն ու նամակները: Երբ սենեակէն ներս մտայ առաջին հարցումնին եղաւ— «պանքը».— Մերն է, ըսի ու ուրախութեան արցունքներ, սուրբ, բարձրացնող արցունքները սկսան հոսիլ մեր աչքերէն ու անվերջանալի համբոյրներ կը փոխանակէինք մէկ մէկու... Համառօտ պատմելով անցած դարձած դէպքերը՝ նամակները գրպանելով դուրս ելայ. այդ միջոցին Վալաթա-Սարայի պահականոցին քով նետեր էին ամենամեծ ռումբերէն մէկը, որը 37 զինուոր սպաններ էր ու 25-ը վիրաւորեր. անմիջապէս պահականոցի քով գտնուող փողոցները պաշարեր էին, որպէսզի նետող քաջը ձերբակալեն, սակայն նա անմիջապէս հեռացեր էր. ես կողմակի փողոցներով ելայ շտակ ճամբուն վրայ. խառնութիւնները գոց էին, փողոցները դատարկ: Մտտեցայ կառավարի մը, առաջարկեցի, որ զիս տանի Թարապիս, բայց նա մերժեց. բաւական յառաջացայ, գտայ ուրիշ կառավար մը, բարի մարդու մը երևոյթն ունէր, համաձայնեցաւ: Առանց բառ մը արտասանելու փուլեցայ կառքին մէջ, որովհետեւ ոչ հայերէն և ոչ ալ թուրքերէն գիտնալ կը ձեւացնէի. կառավարը սկսաւ արագ քշել կառքը: Բանկալի թուրքը յանկարծ երկաթի ձողերով զնուած տաճիկ թուրքապաշտներու խումբ մը

մօտեցան կառքիս ու սկսան դիտել և որովհետև ես եւրոպացի էի ու իրենց մօտենալովը բնաւ չվրդովեցայ, անցան ու ճամբանին շարունակեցին. նոյն դէպքերը պատահեցան նաև ճամբուն, դաշտերուն մէջ ձիաւոր զօրքերու կողմէ:

Հասանք Թարապիւս, չեմ գիտեր ինչ կասկած ունեցաւ կառավարը իմ վրայ՝ մէկէն ի մէկ կանգ առաւ ու ըսաւ.— «ես քեզ չեմ կրնար տանիլ դեսպանատունները»: Անմիջապէս վար իջայ, վճարեցի ու ճամբու դրի. պարտաւորեցայ հիմա դիմել տաճիկ կառավարի ծառայութեան ու անոր միջոցով կատարել ինձ վրայ դրած պարտականութիւնը: Պարտք կը համարիմ այստեղ ըսել, որ շատ հաւատարիմ կերպով զիս առաջնորդեց:

Գեսպանատունները զիս սիրով ընդունեցին, երբ ամենէ վերջ կը գտնէի Աւստրիական դեսպանատունը այդ միջոցին կին մը այցետոմս մը ձեռքին ներս մտաւ լալով—պոռալով՝ «ամուսի՛նս, ամուսի՛նս», այդ ժամանակ ես պօսեալով կոխեցի ու «քօնսիւ տ'արմենի» անունը վաստկելով հեռացայ: Այդ գիշեր անցուցի իմ բարեկամներէն մէկուն տունը:

Հետևեալ առաւօտ, հինգշաբթի շոգեմաւ նստայ ու անցայ Վալաթայ, տղերք արդէն պանքէն դուրս եկեր էին. ոչ բաց խանութ կար և ոչ ալ մարդ, այլ միմիայն ձիաւոր զինուորներ ու թիւրքեր, որոնք խումբ-խումբ կուգային այցելել, Վալաթիոյ աւերակ դարձած խաները ու խանութները նաև պանքէն տեսնելով պանքի վիճակը մէկ մէկու կըսէին՝ «կիւզէիմ պանքը խարապ էթուիլէր» (գեղեցիկ պանքը աւերակ դարձուցին): Անկից անցայ Պոլսոյ կողմը, ան տեղ ալ շատ խանութներ թալանի տրւած ու մի քանի խաներ պաշարած էին զինուորներով:

Ո՛ր էր մէկ օր առաջւայ ուրախ Պոլսը, հիմա տրտնուի, ամայի ու դատարկ էր: Աէսօրին յայտարարեցաւ, որ «վեհափառ սուլթանի շնորհիւ խաղաղութիւնը պիտի հաստատուի» ու սկսան Բերայի մէջ խանութի փեղկերը կիսով բանալ. բայց ատոնք անհիմն սնտոի յոյսեր էին: Աէս օրէն մի քանի ժամ վերջ յանկարծ Վալաթայ-Սարայի պահականցի դէմէն ուժեղ նետեցան, սարսափը մեծ էր, պահականցի դէմ գտնուող դեղագործն ու իր երկու աշակերտները ձերբակալեցան, կարծւելով որ դեղագործն է պատրաստողը ու աշակերտներն են նետողները:

Ժողովուրդը ցիրուցան իրենց տուները քաշեցան, ոչ ձայն կար և ոչ ալ երթալ-գալ. այն ատեն շնորհիւ յեղափոխականներու անգործութիւնը տիրեց...

Միւս օր, ուրբաթ, սուլթանի իրատեով կը յայտարարէր՝ թէ խաղաղութիւնը վերահաստատած է, բայց երբ Պոլսոյ Գաշակեցական Վեդրոնական Կօմիտէն տեսաւ, որ դեռ խուժանք կը շարունակէ իր ընթացքը, իր յայտնի սպառնական նամակը գրեց դեսպաններու, որով երկու ժամ միջոց տալով՝ կառաջարկէր դադարեցնել ընդհանուր կոտորածը ու բանտերու մէջ կատարուող տանջանքները և այլն: Եւ որովհետև երկու ժամը անցաւ և ոչ մի փոփոխութիւն չէր նկատուեր, ուստի հրահանգ տրւեցաւ մեր տղայոց, որ Սելամ-ըքէ վերադարձող զինուորներու վրայ ձգեն ուժեղք, որ իրենց տրամադրութեան տակ ունէին առաջուց: Մեր տղերք շատ ճշգրտութեամբ կատարեցին ու իրարու

ետևէ նետեցին մի քանի ուժեղք. անմիջապէս դէպքին վայրը հասայ, զինուորները անմիջապէս պաշարեր էին տունը, կոտորեցին դռները ու ներս մտան, տղաքներէն մին յաջողքը էր փախիլ, իսկ միւսը՝ որի ձեռքը ուժեղ պայթուցիկ կտրւած էր՝ ձերբակալեցաւ. պահականոց տարին տղան. այնտեղ կսկսին տանջանքներ տալ խոստովանցնելու համար՝ թէ որոնք են իրենց առաջնորդողները ու ուժեղք տուողները. տղան կը պատասխանէ՝ «եթէ զիս սպաննէք, կախէք ու նոյնիսկ կազով ալ այրէք, դարձեալ ո և է գաղտնիք չէք կարողանար ինձմէ իմանալ. սակայն լաւ գիտցէք, քանի որ հայ մը կայ, ձեզի հանգիստ կեանք չկայ»: Կը կարծւի որ բանտին մէջ սպաննած են տղան:

Հետևեալ օրը, շաբաթ՝ տեսայ որ Բերայի ու Վալաթայի մէջ մի քանի խանութներ բաց էին ըրեր, կարծելով թէ յեղափոխականներն ալ յոգնած են... չէ՛, ժամը տասն էր, յանկարծ խանութները սկսան գոցւիլ, ժողովուրդը սարսափահար պոռպոռալով կը վազէր դէս ու դէն, արդէն մեր քաղերը Ղաղաթիոյ մէկ քանի տեղերէ սկսեր էին զինուորներու վրայ կարկուտի նման տեղացնել ուժեղքերը բաւականին մեծ կորուստ մը զինուորներուն տալէն յետոյ, երբ ուժեղքերը կը հատնին, տղայքը կը ձգեն և կը հեռանան: Զինուորները կարծելով, թէ տղայք նոր պատրաստութեանց ետևէ են՝ կսկսեն հրացանաձգութիւնը պատահաններու վրայ, որպէսզի տղերքը չկարողանան մօտենալ պատահաններուն, երբ կը տեսնան թէ որ և է անձ մը չի մօտենար պատահանին, այն ատեն դռները կոտորուելով ներս կը մտնեն, սակայն և ոչ մէկը կը գտնեն, բացի մի քանի խեղճերէ, որք այդտեղ ապաստաներ էին: Տաճիկ զինուորները բաւականին ճարպիկ են հրացանով ապակիները փշրելու և շէնքերու վրայ նշաններ թողնելու մասին:

Այսօր էր, որ տաճիկ հասարակութիւնը հասկցաւ թէ յեղափոխականները իրենց դէմ որ և է ատելութիւն չունին, այլ միմիայն կառավարութեան դէմ մինչև իսկ իրարու խորհուրդ կուտային չանցնիլ այն փողոցներէ, ուր զինուորներ կը շրջէին առարկելով թէ հայերը միայն զինուորներուն վրայ ուժեղներ կը նետեն:

Թրամվէյի մէջ տաճիկ սպայ մը հայհոյելով կը պատմէր իրենց զինուորներու ապուշ արարքներէն մին: Մզկիթի մը դռան մօտ մօլլայ մը տեսնելով, կը կարծեն թէ ծպտեալ հայ յեղափոխական մ'է, անմիջապէս հրացանի կը բռնեն, բայց երբ կարծած յեղափոխականը գետին կը փուռի «ալլահ էքպէր» կը բղաւէ, զինուորները անմիջապէս կը հասնին մեռելի մօտ և կսկսին անոր քղանցքները համբուրել:

Կիւրակի, երբ տեսան, որ մինչև կէսօր ո և է դէպք չպատահեցաւ, սկսան կէսօրէն վերջը քաֆէները բանալ, (2մոռնամ աւելցնել, որ մինչև այդ օրերը թատրոն, երաժշտութիւն և այլն բոլորը դադարած էին), քաղաքապետական պարտեզին մէջ սկսան նազել սակայն եւրոպական ժամը 8 1/2-ին պարտեզի դիմացի շէնքէն «ուժը մը նետուելով» կը սպաննէ երկու լրտես և մէկ ոստիկան և կը վերաւորէ երեք հոգի. անմիջապէս ժողովուրդը սարսափահար կը ցրուի և բոլոր քաֆէները կը գոցւին, նազածունները տեսնելով, որ յեղափոխականներու ուժեղ ձայնը իրենց թրովէթներէն աւելի զօրաւոր է, գործիքները հոն թողնելով

կը փախչին: Այդ օրւան ռուսըր տարբեր տեսակէն էր, վրան գրւած էր կարմիր գրերով հետեւեալը « A bas la Turquie! Vive la liberté! «այս կողորը ոստիկաններու ձեռքը ինչալով, կը կարծեն թէ պատրաստողի անունն է վրան գրած, մեծ գիւտ մը գտնողի պէս կերթան դէս ու դէն՝ ցոյց տալ ու երբ կը տեսնեն, որ գրւած է «կործանի՛ր Տաճկաստան, կեցցե՛ ազատութիւն» այն ժամանակ գլխիկոր ետ կը դառնան:

Երկուշաբթի Մեծ-Ոճրագործի գահակալութեան տարեգարձն էր: Գեսպանները մերժեցին լուսավառութիւն ընելը: Տաճիկ կառավարութիւնն ալ կարծելով, որ մեծ յուզումներ ազդի կունենան, անմիջապէս ժողովուրդին յայտարարեց, որ ոչ Ասփորի վրայ՝ երթեակութիւն ըլլայ գիշերը և ոչ ալ պոստայ թաղերու մէջ, արդէն շատ քիչ տեղեր լուսավառութիւն կար, որոնք աղօտ լոյս մը միայն կը սփռէին՝ հոգեարքի մը հեքի նման: Այդ հազարապէս լուսավառութիւն ընողներուն մէջ կը գտնուէր նաև պարոն դօկտօր Խորասանձեանի տունը...

Ուրիշ տարիներ, որ Պոլսոյ ալ և այլ թաղերու մէջ ռուսացութեան, ցնծութեան ձայներ կը լսէին, նամանաւանդ Երլորդ-Քեօշքի մէջ, ուր բնակող արիւնարբուն, չէր գիտեր թէ ինչ միջոցներով հարեմի հարիւրաւոր կիները զարձացնել տայ, այս գիշեր ամեն տեղ մեռելական խորին ու տխուր լուսութիւն մը կը տիրէր:

**Ն Ա Մ Ա Կ Տ Ր Ա Պ Ի Գ Ո Ն Ի Ց**

3/15 օգոստոս 96 թ.

Համաօտականները Պոլիս սկսած են դնար:

Հայաստանը արիւնով ու կրակով շողախող այդ գազանները ուռած, գինոյցած՝ ձեռք բերւած արատալի յաջողութիւններէն, աւս անգամ կը գնան դէպի Ասփոր, իրենց բարեխնամ հօրը, մարդասէր Համիդին գիրկը նետելու, աֆէրին ստանալու համար:

Այո, Պոլիս կանցնին ատոնք զինուորական-քաղաքական խոշոր պատիւներով. ծառայելու մեծ պոռնկանոցի անտեսի, արիւնարբու Համիդին:

Լիկել անթիւ հայ կոյսեր, սպաննել մարդիկ, քանդել հրդեհներ տներ, հասարակաց հիմնարկութիւններ, ամայացնել դաշտեր և առօք փառօք մարդասէր աշխարհի պարծանքին համար հիւրասիրել շայտութեան քաղաքին մէջ: Արժանաւոր վարձատրութիւն չէ՞ այս:

Ճիշտ է, ասոնց գալովը նոր ու ծանր պատահականութիւններ առաջ չեկան, բայց թէ յիմբի որ մասը նախ քաղաք պիտի մտնէ՝ ի վէճով անանկ բորբոքեցան, որ քիչ մնաց իրարու միս ուտէին. և կուի ատեն մինչև որ 10 քիւրդ անկենդան գետին չինկան ու 5 հատ ալ չվիրաւորեցան հաշտութիւն դուրս չեկաւ: Որոշումը այն եղաւ, որ 610 քրդերու կէսը և 190 հեծեալ արարները (48-ը նիզակաւոր)՝ յուլիս 29-ին քաղաք մտնեն, իսկ մնացածն ալ յաջորդ օրը բայց որովհետև ասպետներու մեծ փափագն էր գնացքին ճակատը գրաւել ետքը մնացած զինուորներուն լոկ բաժին ինկաւ զիրար հրմշտակելով վազ գալ: Ասանկ անկարգութիւններ արդէն արտասովոր չեն և մենք մեր կողմէ բնաւ նպատակ չունինք սուլթանին սիրելի հե-

ծելագնդին կարգն ու սարքը քննադատել: Բանը այն է, որ այդ յելուզակները քաղաքին ամեն կողմը տարածելով, սկսան յոյն և հայ առևտրականներէն առանց վճարուած վաճառք խլել—մինչ ներքայ գտնուող ոստիկանները փոխանակ արգելելու՝ դժգոհ շէմք մը ցոյց կուտային քրիստոնեաներուն և միւսներուն հաճելի դառնալու համար ալ ոչ մի տգեղ միջոցներէ չէին կէրուշանար: Փողոցի մէջ քրդերը, երբ ոչ մահմեդականի մը հանդիպէին, կը բռնէին ու կը հարցնէին «հայ ես թէ յոյն», մի քանի տներ ալ մտան, բայց նշանակիլի միասնեք հասցուցին:

Օգոստոս 1-ի երեկոյեան, ժամ 5/2-ին (ը. ե.) քրդական հրոսը իրենց ձիերով, արդէն զեմեդաւած էր Օսմանեան երեք շոգենաւերու մէջ: «Կիւզէլ-Սարայ» զինուորանոցէն նւազարաններով ողջերթ կը մաղթէին բարբարոսի դրօշակը շարունակ կելեկէր և մեզի ծանօթ գազանները իրենց խոպոտ վայրենի գոչումներով «փառաշահըմ չօք եաշայ» կաղաղակէին: Մուհամմեդի զաւակներուն մէջ արտակարգ ցնծութիւն մը տիրած էր, շամիրը բերանաբաց՝ հիացած աչքերով կը դիտէին այդ տեսարանը:

Լուսութիւնը հազիւ թէ պահ մը տիրած էր, իսկոյն ռուսական զրահաւորէն «Համիդիէի մարշը» լսելի եղաւ, չէինք ուզեր հաւատալ առաջին անգամ: Ճիշտ էր, այնտեղ բոլոր զինուորական ռուս անդամները կարգաւ շարած՝ յարգալի բարեկներ կը մատուցանէին ներքինապետի սաներուն և արևելքի քրիստոնեաներու պաշտպան յորջորջուող ցարի դրօշը քանի՞ անգամներ գլուխ ծռեց մարդակուլ գազաններու առաջ:

Մեզ կը թւի թէ դիպումատիայի համար ա մ'օ թ ը իր շրջանը բոլորովին անցուցած է.—տեսնել արեան վտակներ, հրդեհներ, տեսնել մահ, բանտ, պստօր, տեսնել կուլտուրական ազգերու իսպառ կործանումը, բնաջինջ լինելը և դեռ խոռնկ ծխել այս ամեն չարեաց հեղինակին ոտաց առաջ:

Ինչ գահավիժում, ինչ պնկում: Անիրաւներ, գոնէ մի՛ ծածկէք դուք ձեզ մարդասիրութեան դիմակին սակ: Այսօր բիրտ ոյժը ձեր ձեռքը գտնելով, ոճրագործի, մարդասպանի դեր կը կատարէք, ձեր քմահաճոյքին համաձայն, սուրի և կըրակի կը մատնէք խաղաղ անտէր ժողովուրդները: Այցէք քիչ մը լերբ բռնակալներ:

Ուրիշ բան չենք մաղթեր այդ բռնակալներուն, մարկային արդարութեան վրէժխնդրութիւնը միայն...

Մենք մեր նշանաբանէն չենք շեղիր բնաւ: Ի դուր բռնակալ-ոճրագործները մեր ձայնը կուզեն խեղդել մենք պիտի կուլինք, պիտի գոռանք, ու պիտի կրկնենք, անդադար ազատութիւն:

**Ն Ա Մ Ա Կ Վ Ա Ն Ի Ց**

10/22 օգոստոս 96 թ.

Երկուշաբթի (յուլի. 3-ի) կէսօրէն կսկսի կոտորածը: Հալիմ էֆէնտի կոչւած հազարապետը, որ նշանաւոր եղած էր Սասունի և Սղերդի կոտորածներին մէջ իր ըրած շահատակութիւններով և որուն յանձնած

էր Այգեստանի պաշտպանութեան գործը, խուճը մը զօրքով Արարուց հրապարակէն անցնելով դէպի Կլոր-Դար կողմէն թաղը, կը յառաջանայ և հայոց թաղերուն մօտենալուն պէս՝ խուճը կը կեցնէ, կը հրամայէ խմբովին կրակ ընել: Բազմաթիւ հրացաններ միաձայն կորոտան: Դա նշան էր, որով պիտի սկսէր վաղուց ի վեր այնքան տենչանքով սպասած «Սուրբ Գործը»:

Իսկոյն քաղաքի բոլոր թրքաբնակ թաղերէն կատարի թիւրք խուճանը հրացաններով, դաշոյններով և տապալներով զինւած՝ անպաշտպան հայ տուններու վրայ ընկան և սկսան անխնայ ջարդել, փշրել, կոտորել:

Գիշերը կը դադարի շփոթը, բայց յաջորդ առաւօտ նոր սաստկութեամբ կը վերսկսի. թիւրք խուճանը կսկսի յառաջանալ դէպի շատ մը հայաբնակ թաղեր, բայց այժմ բոլորն ընդդիմադրութեան առաջ կը փակուին. հայեր իրենց տներու մէջ ամրացած՝ ամեն կողմէ կրակ կընեն և չեն թողուր, որ թշնամին քայլ մ'աւելի առաջ անցնի: Նախորդ օրայ կոտորածէն կիններն և մանուկները հիւպատոսների առաջնորդութեամբ հաւաքուած, կուգան հայոց թաղերը կապատանին և հայերը այդ օր գրեթէ մէկ անձի կորուստ կունենան: Վարագայ վանահայր ԳԱՆԻԷԼ ՂԱՐԴԱՊԵՏ փողոցի մը մէջ, պահականոցէ մը ոչ հեռու կսպանկի զինուորներէ (դիակը փողոց կը մնայ, շունները կը յոշտեն, երկու օր վերջ հազու կը վերցւի):

Չորեքշաբթի (յունիս 5-ին) թիւրք խուճանի վրայ կուգան կաւելանան նաև քիւրդեր և համիդիաներ: Նոր յարձակում բոլորն սաստկութեամբ, բայց ինքնապաշտպան հայեր արիութեամբ կը դիմադրեն, շատ տանիքներու վրայ պատնէշներ շինած էին, արդէն փողոցներու մէջ ալ ծառեր կտրելով՝ ճամբաները ձիաւորաց համար անտանելի դարձուցած էին: Թշնամուն անկարելի կը ըլնի ոչ մէկ հայաբնակ թաղի մէջ մուտք գործել: Այդ օրը կուրը կը շարունակուի մինչև իրիկայ ժամը: Պահ մը կընդհատուի, ապա նոր սաստկութեամբ կվերսկսուի. ամբողջ գիշերը հայերը անընկճելի կը մնան. քիւրդերու և թիւրքերու դիակները կը վերցւին կուռոյն վայրերէն:

Հինգշաբթի (յունիս 6-ին), կուրը նոյնութեամբ կը շարունակուի: Նոր քիւրդեր և համիդիաներ 7-10,000 կուգան, կաւելանան յարձակող խուճանի վրայ: Ամենք կը խօսէին՝ թէ համիդիաներու թիւրք ի մօտոյ 15,000 պիտի բարձրանար: Զօրքերն ալ որ մինչև այն ատեն անպաշտպան կերպով խառն կը գործէին խուճանի և քիւրդերի հետ, պաշտօնապէս հրաման կստանան կրակ ընել ապստամբներուն վրայ: Հայեր անվեհեր պաշտպանողական դիրք կը պահեն և անընկճելի կը մնան: առանց կորուստ մը տալու, թշնամին միայն կառնի իր դիակներ և կըկրկի:

Պարզ է թէ հայերի այս յաջողութիւնը ինչ ոգեւորութեամբ և աշխոյժով կը սրտապնդէ զամենքը և միւս կողմէ ինչ լքում և յուսահատութիւն կը պատճառէ թշնամուն:

Այդ օրը կէսօրէն սկսեալ իրերը նոր կերպարանք մը կստանան:

Այստեղի անգլիական հիւպատոս Ալիքամս տեսնելով որ հայոց այս անկուն ընդդիմադրութիւնը կրնայ խնդիրը երկարաձգել և թերևս իր տեսակէտով անախորժ հետեանքներու տեղիք տալ մէջ մտաւ, այցելեց

անպաշտօն կերպով՝ ինչպէս հայոց, նոյնպէս թիւրքաց բռնած քանի մը դիրքեր, ուսումնասիրեց իւրաքանչիւրի կարողութիւնը և փութաց խնդրոյն վերջ տալ որ և է եղանակաւ:

Հաւատարիմ պաշտօնեայ իր կառավարութեան նենգամիտ քաղաքականութեան ամեն ջանք ի գործ դրաւ հայոց այս օրինաւոր ինքնապաշտպանութեան գործը անտեղի պատմութիւն մը նկատելով, ղեկավարներ ընել հայոց տալ և գործը կարգադրել համաձայն տեղական կառավարութեան պահանջներու: Եւ իր նրպատակին հասնելու համար ալ մի շատ յարմարաւոր գործիք գտաւ, այն է ամերիկացի բողոքական միսիօնար յաջորդ Ռէյնոլդս, որ վերջերս թիւրք կառավարութեան և միսիօնարութեան միջև լարած յարաբերութիւնները բարուրելու գեղեցիկ միջոց մը երբէք ձեռքէ չպիտի թողուր:

Ալիքամս, յաջորդ Վ. Ռէյնոլդսի միջոցաւ և անձամբ ալ ուրիշի մը խօսելով, լուր ղրկեց ինքնապաշտպան հայերու երեք պետերուն և տեսակցութիւն մը առաջարկեց, յայտնելով թէ՛ ինքը վեց պետութեանց ներկայացուցիչ է, որի հաստատութեան գրաւոր ապացոյցներ ունի իր ձեռքը:

Հայերը շատ կը վարանին, բայց վերջապէս տեսակցութիւն կը որոշեն յաջորդ ուրբաթ օրայ համար:

Նոյն ուրբաթ գիշերը կը շարունակուի կուրը, թշնամին քանի մը կէտերէ միահամուռ կրակ կընէր, թէև առանց ոչ մի յաջողութեան:

Ուրբաթ օր (յունիս 7-ին) ընդմիջաբար կուրը դարձեալ կը շարունակուի: Նոյն օրը կէսօրէն առաջ տեղի կունենայ ժամադրած տեսակցութիւնը, մէկ կողմէ Ալիքամսի և Ռէյնոլդսի, միւս կողմէ Յ հայ պետերու միջէն. անգլիական հիւպատոսը կառաջարկէ, որ այդ երեք անձինք 10 զինեալներով իրեն յանձնուին այն պայմանով, որ ատոնք անվտանգ իրենց տեղն ուղարկին և կարգ ու խաղաղութիւն վերահաստատուի երկրի մէջ: Հայերը չմերժեցին, բայց պահանջեցին, որ այդ առաջարկը չէ թէ միայն անգլիական հիւպատոսի, այլ նաև տեղոյս միւս հիւպատոսներու կողմանէ ի միասին դուրս իրենց:

Ալիքամս յայտնապէս կուղեր այս խնդիրը ինքը միայնակ կարգադրել: Նախորդ օր նա ընդունած էր հեռագիր մը, որ կը ծանուցանէր թէ Վանի մէջ Ֆրանսիական հիւպատոսութիւն ալ հաստատուած է և թէ տեղոյս կաթողիկ միսիօնար Պէր թիւրք անս նշանակած է այդ պաշտօնին, բայց նա փութաց իրեն հետ առնելով բերել միայն պարսից հիւպատոս Միրզա-Հիւսէին խան և Ռուսաց հիւպատոսարանի թարգման Կարապետ 2 իլիին քարով (հիւպատոս Վարդիմիր Թիֆլիզ գացած էր 2 շաբաթ առաջ):

Ինչպէս առաջին, նոյնպէս և այս երկրորդ տեսակցութեան ներկայ էր հայոց առաջնորդ գերապատիւ Տէր-Սահակ վարդապետ: Յ հայ պետեր իրենց հետ ունէին երկու երկու զինակիրներ:

Այս անգամ առաջարկը փոխուած էր. 10-ի փոխարէն 60 զինեալ պահանջեցաւ Յ պետերու հետ: Ատոնք հիւպատոսներու երաշխաւորութեամբ կառավարութեան պիտի յանձնուին և բարձրագոյն ներողութեան պիտի արժանանային և երկրի մէջ կարգ պիտի վերահաստատուէր: Հայ պետեր դարձեալ չմերժեցին

սկզբունքով, միայն թէ մեզ միջոց տւէր ըսին, որպէսզի կարենանք համոզել յանձնել այդչափ անձ, մենք մեր անձերու միայն պատասխանատու ենք: Եւ 24 ժամ միջոց տրւեցաւ այն խոստումով, որ նոր յարձակում չլինի մինչև հայոց վերջնական պատասխանը:

Բայց դեռ ժամ 8-ը հազիւ էր անցել և ահա շաբաթ դիշեր (յուշիս 8-ին) թնդանօթներ ըսկսան որոտալ, հայոց բռնած դիրքերը կսկսին ուժակոծել: Կատաղի էր կռիւը, ոչ նւազ կատաղի և դիցազնական էր հայոց ընդդիմադրութիւնը. թշնամոյն դիակները շուտ-շուտ կը վերցւէին, կուռղ հայերէն երկու անձ միայն նահատակեցան, վիրաւոր մէկ հատ. եղաւ ժամանակ իսկ, երբ թշնամին թնդանօթներ փողոց թողոց և փախաւ. հայեր առանց դժարութեան առոնք ձեռք ձգել կրնային, եթէ չկասկածէին՝ թէ դաւ մը չէ այդ, որ կը լարւի զիրենք դիրքերէն վար բերելու համար:

Հայեր ամբողջ 12 ժամ իրենց բռնած դիրքերու մէջ կընդդիմանան այդ ուժակոծութեան: Կատաղի էր կառավարութեան զայրոյթը: Հիւպատոսներու և միսիօնարութեան կը ծանուցւի բերդ քաշել, և նոր մեծ թնդանօթներ վար կիջուցին բերդէն, Այգեստան բերելու համար: Անդիական հիւպատոսը, որ ապստամբ հայերն ընկձելու համար ինք խորհուրդ տւած էր կառավարութեան, իբրև միակ միջոց՝ նախ զօրք, ապա թնդանօթ գործածելու և որ մինչև իսկ իբրև թնդանօթաձիգ սպայ զանազան հրահանգներ տւած էր հրետանեաց գործածութեան մասին, կը ջանայ համոզել իր պաշտօնակիցներ և միսիօնարներ կամ ընդունիլ կառավարութեան հրահարը և բերդ քաշել և կամ բոլորն ի միասին համախմբել առանձին տեղ մը և զերծ մնալ ընդհանուր և սոսկալի կոտորածէն:

Այդպէս ալ պիտի լինէր, եթէ ի մասնաւորի ուսաց հիւպատոսի թարգման Կարապետը բացարձակապէս չընդդիմանար, յայտնելով, որ ինքն պարտաւոր է իր պետութեան դրօշակին տակ միայն փչել իր վերջին շունչը:

Հիւպատոսներ և միսիօնարներ իրենց սներ քաշեցան, հազարաւոր ժողովուրդ անոնց դրօշակներու տակ ապաստանեցաւ, իսկ կռիւը կը շարունակէր կատաղաբար, թնդանօթներ անընդհատ կորոտային:

Ուժակոծութեան հետ սկսաւ նաև հրծիգութիւն, թնդանօթները ուժակոծելու հետ հրդեհներն ալ արձակել սկսելով՝ հանգեցուցին այն տուններ, ուր հայեր դիրք բռնած էին. ստոր վրայ միայն է, որ դժբախտ մարտնչողներ կը հարկադրւին նահանջիլ: Հրդեհ և ուժակոծութիւն աստիճանաբար աւելի շարունակեցաւ մինչև երեկոյ: Հայոց բռնած դիրքեր միշտ հրդեհեցելով, հայերը կը հարկադրւին միշտ տեղի տալ և թըշնամին կը յառաջանայ: Վերջապէս կը համոզւին, որ ի զուր է այլևս դիմադրել և եթէ շարունակել այսպէս, քանի մը ժամէն ամբողջ քաղաքը մոխրակոյտ մը կը դառնայ:

Սուռղ հայեր հիւպատոսարանաց միջոցաւ կը յայտարարեն կառավարութեան, թէ իրենք զէնքը վար կը դնեն և նոյն օր իսկ քաղաքէն դուրս կելլեն:

Եւ իրօք, նոյն գիշեր (շաբաթէն կիրակի, յուշիս 8-9) 1500-ի չափ երկասարդներ զինեալ և թէ անգէն դուրս կուգան Այգեստանէն երեք պետերու առաջնորդութեամբ և լեռ կը բարձրանան, ոչ ոք չի հա-

մարձակիր անոնց դէմ ելնել կամ ետևէն երթալ:

Այգեստանի ամբողջ հայ ժողովուրդը ամփոփւած էր 5 կէտերու վրայ՝ Ռուսիոյ, Անգլիոյ և Պարսից հիւպատոսարաններ, կաթօրիկ ու բողոքական միսիօնարաց կացարաններ և անոնց դրացի տուններ, որոնց բողոքի վրայ կը ծածանէին օտար պետութեանց դրօշակներ: Իսկ անպաշտպան քաղաքը մասնակցաւ զօրքերու, համրիականներու և թիւրք, քիւրդ ու գնչու խուժանի անխնայ աւարառութեան և հրծիգութեան: Այս վիճակը տևեց ամբողջ 2 օր (կիրակի և երկուշաբթի յուշիս 9-10): Կիրակի Ղիլիմաս և Ռէյսոյս հանրագրի օրինակ մը պատրաստելով Սաարէդդին փաշային կը ներկայացնեն, նա չի հաւանիր, կը փոխեն, երկրորդն ալ չի հաւանիր. երրորդին հազիւ կը հաւանի և կը կանչւին հայ մեծամեծներ ստորագրել կը տրւի և սուր թանին կուղարկւի: Այդ հանրագրի մէջ հայեր Սաարէդդին փաշայի անձնաւորութեան մասին կարգ մը գովեստներ տալէն վերջ կը խոստովանէին, որ իրենց մէջ դրսէն եկած գրգռիչներն էին, որ պատճառ եղան այս ապստամբութեան և տեղի տին կարգ մը շփոթութեանց և այժմ, որովհետև հեռացել են այդ չարագործները, ուստի կը խնդրեն բաւական համարիլ այս պատիժը և կարգ ու խաղաղութիւն վերահաստատել և այլն և այլն...

Վեհ սուլթանի բարձրագոյն կոմսերը հասած էին իրենց նպատակին, հայոց իսկ հաստատել տւած էին թէ իրենք պատճառ եղան այս շփոթութեանց: Բայց կարգ և խաղաղութիւն վերահաստատելու համար կարևորութիւն չունէր այդ խոստովանութիւն:

Վողպուտը շարունակեցաւ և Այգեստանի մի քանի փողոցներ միայն զերծ մնացին կողպուտէն, մնացեալ ամբողջ մասը, որ կը պարունակէր շուրջը 3000 հայ տուն իսպառ կողպուտեցաւ: Այրւեցան 600-է աւելի երկար կամ եռյարկ մեծ տներ: այրեցին Յայնկոյս-Չորոց, Սուրբ Յակոբայ և Հայկավանուց եկեղեցիներ իրենց կից դպրոցներով և շէնքերով հանդերձ. ամբողջ Յայնկոյս-Չորոյ գեղեցիկ ու բանաստեղծական փողոցը, ուր կը գտնւէր նաև Հայրիկի ծննդավայր բնակարանը, իր կից փողոցներով մէկտեղ մոխրակոյտ մ'է այսօր:

Թիւրքերը իրենք ևս կը զարմանան իրենց տարած կողպուտի ու հարստութեան վրայ, յիշէ ապերախտ ժողովուրդ է հայը, կըսեն, այսքան հարստութիւն դիզել շնորհիւ մեր կառավարութեան, տակաւին դժգոհ լինել: 1 միլիօն օսմ. ոսկիէն աւելի կը հաշուեն Այգեստանի տւած նիւթական կորուստը, առանց հաշուելու այրած տուների արժէքը:

Այս ամենը տեղի կունենան Այգեստանի մէջ, իսկ քաղաքամէջը կը պաշտպանուի 2էրքէզ հազարապետ Բամին. աղայի շնորհիւ: Մինչդեռ Այգեստանի մէջ հազարապետ Հաշիմ էֆէնդին կը պոռար խուժանին՝ յօն, զաւակներս, կոտորեցէք առ այժմ, կողպուտը վերջէն, անոր պաշտօնակիցը՝ Բամին աղան իր զօրաց կրակ ընել կուտայ թիւրք խուժանին վրայ, որ շուկային վրայ յարձակել կուզէր և 2 անձ սպանել կուտայ, մի անձն ալ ինքն անձամբ կսպանէ, և իր այս կորովի ընթացքը կը սասանեցնէ զամենքը և մինչև ցարդ գրեթէ անվտանգ կը պահէ շուկան և ամբողջ քաղաքամէջը. քաղաքի այդ մասին մէջ մինակ 15-ի չափ հայեր կան սպանած և 120-ի չափ խանութներ

Տաղիւ կողոպուած, գաղտագողի ետներէն ծակելով:

Երկուշաբթի, յունիս 10-ին աւերիչ խուժանը կը հասնի մինչև հիւպատոսներու թաղերը: Ռուսաց հիւպատոսարանի դիմացի տներէն շատերը, մինչև իսկ դըրացի քանի մը տուներ կողոպուելէ զատ, կայրւին իսկ: Կացնի հարածներով խորտակել կուզեն հիւպատոսարանի քովի տուներէն մինը, ուր ապաստանած էին հազարաւոր անձինք՝ և որուն վրայ կը ծածանէր ռուսաց դրօշակը, բայց չեն յաջողիր և հազիւ յետ կը քաշին:

Այդ օր առաւօտ, այս սոսկալի արհաւիրքի միջոցին անգլիական հիւպատոսարանէն և ամերիկ. միսիօնարաց տուներէն ու պարտէզներէն Վիլիամսի և Ռէյնօլսի ձեռամբ կը ջնկւէին, դուրս կը հանւէին ամեն արու անձեր և կը պահուէին միայն կիներ ու տղաներ:

Յայտնի էր արդէն, թէ կոտորածի հրամանը գլխաւորապէս արական սեռին համար էր:

Երևակայեցէք, թէ քանի՛ քանի՛ներ առ ահի թողին ու փախան, ջըհորներ, դաշտեր ու լեռներ ապաստանեցան, իսկ եթէ ատոնցմէ քանիներ կրցան ազատիլ մահանէ, այդ Աստուած գիտէ միայն:

Այդ երկուշաբթի, կոտորածի ծրուէն կէսօրին, կը փչեն մայնաբոսիս (հանգստեան փողը), աւարառութիւնը և հրդեհը կը դադարին, հայաբնակ թաղերը զինուորական շղթայի տակ կանուխն, մի քանի օր ալ ապահովութեան այդ պահանջները կը շարունակեն խուժանի պակաս թողածը: Այժմ վերջապէս մի թիչ կարգ և խաղաղութիւն վերահաստատուած կերևի, բայց հայերը նորաշէնի շրջականերէն և հիւպատոսներու տուներէն չեն կրնար հեռանալ ամեն տեսակ մասնաւոր դէպքեր անպակաս են:

Տակաւին թիւրք մոլեռանդութիւնը հակեալ չի երևիր, վասնզի նախ որ ռֆիզայիներ՝ ձեռք չընկան, ապաւեցան և երկրորդ, թէև հայոց տուած անձի կորուստ 1000-ի չափ է, բայց իրենց՝ թիրքերու կորուստն ալ 500-ի մօտ է: Այնուամենայնիւ մեր տուած կորուստը միայն քաղաքի այս կոտորածն ու կողոպուտը չէ, մեր գիւղերու վիճակն է որբալի...

Քաղաքի աւարառութենէն վերջ այստեղէն մեկտող քիւրդերը և համիդէները չարիք չմնաց, որ չհասցընէին անպաշտպան գիւղերուն. շուրջ 200,000 հայ ազգաբնակչութիւն ունեցող Վասպուրականի ամբողջ գործող բազուկները չլատեցան, փճացանք մի քանի օրւայ ընթացքի մէջ:

Այս շաբթուն կուսակալ նազըմ փաշան հրաժարական տալով՝ ընդունեցաւ և տեղը առ ժամապէս նշանակեցաւ ն. վեհ. բարձրագոյն կոմիտէի Սաադէդդին փաշան:

Ձինուորական ատեան մը կազմուած է այժմ՝ ապրտամբներ և չարագործներ գտնելու և պատժելու համար:

Տեղւոյս կաթօլիկ միսիօնարներէն Պեր-Գիւֆրանս նշանակուած է Ֆրանսիական դէլէկատ:—Երկու օր առաջ ալ ռուսաց հիւպատոս Վլադիմիր տեղս հասաւ:

Առայժմ կատարեալ անստուգութեան մէջ ենք. թէև առ երևոյթապէս հանդարտութիւն կըտիրէ, բայց կարելի չէ վստահիլ: Գիւղերէն հետզհետէ հասնող լուրերն ալ շատ սրբաձմիկ են:

Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

(ՇՆՈՐՈՊԱԿԱՆ ԹԵՐԹԵՐՈՑ)

—Պետութիւնների ներկայացուցիչները ամենամանրամասը կերպով հերքում են այն բոլոր փաստերը, որոնցով Բ. Գուռը ձգտում է արգարացնել իրեն և աղաւաղել իրողութիւնը: Նրանք ապացուցած են համարում, որ քաղաքական և զինուորական պաշտօնեաները դիտել են անտարբեր աչքերով կատարուած խժդգութիւնները և մինչև իսկ գործօն դեր են խաղացել: Դեսպանները դիտել են տալիս նոյնպէս, որ հայերին հալածող ամբոխը պատրաստուած և կազմակերպուած էր նախօրօք:

—Կոտորածները քննելու համար նշանակուած յանձնաժողովը, որը միևնոյն ժամանակ իբր արտակարգ մարմին՝ դատ պէտք է բանայ խառնակութիւն առաջ բերողների դէմ, շարունակեց երէկ իր գործը: 143 հոգու (տաճիկներ ու հայեր) մեղադրական թղթերը յանձնած են դատաստանական ատեանին:

—Սեպտ. 4-ին.—Արժանահասար աղբիւրների համեմատ՝ դիպլոմատիական մարմնի մի քանի անդամները վկայ են, որ տաճկաց պաշտօնական մարմինները մահակներ էին բաժանում տաճիկ խուժանին: Ռւրիշները ատեսել են՝ ինչպէս մարդիկ մանում՝ էին առանց փայտի ոստիկանատուն և մահակներով զինուած դուրս պրծնում:

Բռնուած է Ռօզոստոյի վրայով եկող մի նաւաղիւսներով բեռնաւորած: Պոլսում քննութեան են ենթարկել և աղիւսների տակից մեծ քանակութեամբ ուժանակ է գտնել: Նաւի մարդիկը բանտարկուած են: Սաստիկ պանիկ է այսօր տիրում: Պոլսում ամբոխի մէջ:

Երէկ կողմից լուում է, որ Անգլիական դեսպանատունը կարգադրել է, որ անգլիացուց առևտրական տները, իրենց խանութները կողպեն,—միւս կողմից լուում է, որ 5 յոյն է սպանուած: Պայծակի արագութեամբ լուր տարածեց, որ նորից կոտորածներ են սկսուում: Փախչող փախչողի էր: Զարդ ու ճիւղոց:—Շուկաներ ծածկեցան և պատսպարեցին տներում: Բայց լուրը չը ձշուեց:

Օտարականների երթևեկութիւնը դադարած է. վաճառականութիւնը կանգնած:

Շատ հիւրանոցներ ստիպուած են ծածկել: Հայկական մասերում սիրտ պատառող տեսարաններ են ներկայացնում, այնտեղ տիրող ծայրայեղ քաղցից: Շատ ընտանիքներ զոհուած են իրենց կերակրողներից:

Սպանների և ոստիկանական կոմիսարների ատելով իրենց ստացած առաջին հրամանները եղել են՝ պաշտպանել միմիայն օտարահայտակներին: Իսկ հայերի դէմ հալածանքին վերջ տալու հրամանը տրուած է եղել միայն օգոստ. 28-ին, կէսօրից յետոյ: Աւելի խիստ կերպով այդ հրամանը կրկնել է ուրբաթ գիշերը և շաբաթ օրը, որովհետև խժդգութիւնները շարունակուում էին:

Դաշնակցութեան անձամօթնորոց խնդրում է թղթակցութեան և նւիրատութեան համար դիմել:

Armène-Gaspar, poste restante, Carouge (Suisse).

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան: